ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ ԵՎ ՊԱՅՄԱՆՆԵՐ

ԲԱԺԻՆ 1

Առարկա.

1.1 Սույն **ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ** սահմանում են «ՏԵԼԵԿՈՄ ԱՐՄԵՆԻԱ» բաց բաժնետիրական ընկերության կողմից ֆիզիկական և իրավաբանական անձանց հանրային էլեկտրոնային հաղորդակցության և այլ ծառայությունների մատուցման ընդհանուր դրույթներն ու պայմանները և հանդիսանում Ծառայությունների մատուցման պայմանագիր կնքելու հրապարակային առաջարկ: Հրապարակային Պայմանները (այսուհետ՝ Պայմաններ) բաղկացած են Բաժիններից, կետերից, ենթակետերից, Եզրափակիչ և Անցումային դրույթներից:

1.2 Պայմանները համարվում են բաժանորդի/հաճախորդի կողմից ամբողջությամբ և անվերապահորեն ընդունված (ակցեպտավորված)՝

- Ծառայություններին բաժանորդագրվելու դիմումը (դիմում/հայտը) առձեռն, ինտերնետ կայքի, My Team հավելվածի միջոցով կամ նոտարի կամ օրենքով նոտարին հավասարեցված մարմինների վավերացմամբ լիազորագրի հիման վրա հանդես եկող Բաժանորդի ներկայացուցչի կողմից Վաճառքի և սպասարկման կենտրոն կամ Օպերատորի անունից Ծառայությունների վաճառք իրականացնելու լիազորություն ունեցող անձին/աշխատակցին ներկայացնելու պահից,
- Օպերատորի կայքի, My Team հավելվածի միջոցով դիմում ներկայացնելու դեպքում՝ բաժանորդագրվելուն ուղղված գործողությունները (հավելվածի ներբեռնում, գրանցում կայքում, համապատասխան գումարի վճարում և այլն) ավարտին հասցնելու պահից :
- Էլեկտրական տրանսպորտի լիցքավորման ծառայությունների մատուցման դեպքում՝ Հաճախորդի, Բաժանորդի կողմից Team Energy հավելվածի ներբեռնման և այդ ծառայությունից օգտվելուն ուղղված գործողությունեերի իրականացման պահից:

1.3 Հաճախորդը/Բաժանորդը կարող է սույն Պայմանները ընդունել (ակցեպտավորել) նաև Էլեկտրոնային եղանակով: Էլեկտրոնային եղանակով բաժանորդագրման կարգը տեղադրված է Օպերատորի ինտերնետային կայքում: Ավելին՝ https://www.telecomarmenia.am/hy/esim

1.4 Չհակասելով այլ դրույթներին՝ սույն Պայմանները միաժամանակ հանդիսանում են Օպերատորի կողմից նույն առարկայի վերաբերյալ հրապարակված նախկին Պայմանները 2021թ. ապրիլի 12-ից նոր խմբագրությամբ հաստատելու առաջարկ: Մինչև նշված ամսաթիվը Պայմանների վերաբերյալ գրավոր առարկություն կամ նախկինում կնքված պայմանագրի դադարեցման պահանջ չստանալու դեպքում՝ սույն Պայմանները կհամարվեն Բաժանորդի կողմից գործողությամբ ամբողջությամբ ակցեպտավորված, եթե նշված ամսաթվից հետո բաժանորդը շարունակում է օգտվել Ծառայություններից:

ԲԱԺԻՆ 2

Սահմանումներ .

2.1 **Օպերատոր՝** «ԹԻՄ ՏԵԼԵԿՈՄ ԱՐՄԵՆԻԱ» ապրանքային նշանի ներքո հանդես եկող «ՏԵԼԵԿՈՄ ԱՐՄԵՆԻԱ» բաց բաժնետիրական ընկերություն՝ ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (այսուհետ նաև «**Հանձնաժողով**») և Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի կողմից տրամադրված լիցենզիաների և թույլտվությունների հիման վրա ՀՀ-ում հանրային էլեկտրոնային հաղորդակցության, հեռուստատեսային և այլ ծառայություններ մատուցող ընկերություն:

2.2 Օպերատորի կայք՝ Օպերատորի պաշտոնական ինտերնետային կայք՝ www.telecomarmenia.am:

2.3 Հանրային էլեկտրոնային հաղորդակցության և այլ ծառայություններ՝ Օպերատորի կողմից մատուցվող ծառայություններ, որոնք ներառվում, բայց չեն սահմանափակվում սույն Պայմանների 3.1 կետում նշված ցանկով:

2.4 Օպերատորի Ցանց կամ Ցանց՝ Օպերատորի կողմից շահագործվող էլեկտրոնային հաղորդակցության ցանց՝ հաղորդման համակարգ, իսկ համապատասխան դեպքերում նաև միացնող-անջատող կամ ուղղորդող սարքավորումներ և այլ ռեսուրսներ, որոնք թույլ են տալիս հաղորդել տեղեկատվություն/ ազդակներ (սիգնալներ) օպտիկամանրաթելային և/կամ այլ տեսակի մալուխով (այսուհետ՝ Ամրակցված ցանց), ռադիոալիքներով կամ այլ էլեկտրամագնիսական միջոցներով, այդ թվում՝ արբանյակային ցանցով (այսուհետ՝ Շարժական ցանց):

2.5 Ցանցի Ծածկույթ՝ աշխարհագրական վայր/տարածք, որտեղ (որի սահմաններում) առկա է Օպերատորի Ամրակցված ցանցով (Ամրակցված ցանցի ծածկույթ) և/կամ Շարժական ցանցով (Շարժական ցանցի ծածկույթ) մատուցվող Ծառայություններից օգտվելու տեխնիկական հնարավորությունը: Ցանցի ծածկույթի, դրա սահմաններում մատուցվող ծառայությունների, կիրառվող տեխնոլոգիաների վերաբերյալ մանրամասն տեղեկատվությունը հասանելի է Օպերատորի կայքում https://www.telecomarmenia.am/hy/coverage-areas հղումով:

2.6 Անձնական գրասենյակ՝ Օպերատորի կայքում բաժանորդի անձնական էջը/տիրույթը, որի միջոցով Բաժանորդը կարող է կառավարել հեռահաղորդակցության ծառայությունները՝ առանց այցելելու վաճառքի և սպասարկման գրասենյակ: Հնարավորություն կա միացնել կամ անջատել ծառայությունները, փոխել սակագնային փաթեթը վճարման կանխավճարային համակարգում, միանալ առցանց կապին և այլն:

Ավելին՝ https://www.telecomarmenia.am/hy/mobile-services/private-cabinet/120

2.7 My Team հավելված տիրույթ, որի միջոցով Հաճախորդ/Բաժանորդը կարող է կատարել բաժանորդագրման հետ կապված Օպերատորի կողմից սահմանված և թույլատրելի գործողություններ, փոփոխություններ, ինչպես նաև ծանոթանալ Ծառայությունների մատուցմանն առնչվող տեղեկություններին, փոփոխություններին:

Ավելին՝ https://www.telecomarmenia.am/hy/my-team-armenia-terms-conditions

2.8 Վաճառքի և սպասարկման կենտրոն (ներ)՝ հաճախորդների/բաժանորդների սպասարկման համար Օպերատորի կողմից առաջարկվող Ծառայությունների և սարքավորումների վաճառքի և սպասարկման մասնագիտացված կենտրոն(ներ):

2.9 Առցանց խանութ՝ Տիրույթ Օպերատորի կայքում, որտեղ հաճախորդը/բաժանորդը կարող է ծանոթանալ առցանց վաճառքում առկա համարների և սարքավորումների ցանկին, ստանալ ամբողջական տեղեկատվություն այդ սարքավորումների տեխնիկական բնութագրերի վերաբերյալ, ինչպես նաև առցանց՝ կանխիկ կամ ապառիկ տարբերակով ձեռք բերել վաճառքում առկա համարները կամ սարքավորումները:

Ավելին՝ https://www.telecomarmenia.am/eshop/hy

2.10 Կոնտակտային կենտրոն՝ Օպերատորի մասնագիտացված ստորաբաժանում, որտեղ զանգահարելով և/կամ գրավոր հարցման միջոցով անցնելով համապատասխան նույնականացում, Բաժանորդը կարող է տեղեկություն ստանալ իրեն մատուցվող Ծառայությունների, հաշվարկված վճարների, մատուցվող հավելյալ ծառայությունների, ինչպես նաև Ծառայությունների սահմանափակման/կասեցման (դադարեցման) պատճառների վերաբերյալ՝ անհրաժեշտության դեպքում իրականացնելով Ծառայությունների ակտիվացում/ապակտիվացում և ստանալով տեխնիկական աջակցություն

~~2.11~~ Շրջանակային պայմանագիր (Հիմնական պայմանագիր), որը կնքվում է ցանկացած ֆիզիկական կամ իրավաբանական անձի հետ, երբ վերջինս ցանկություն է հայտնում օգտվելու «ԹԻՄ ՏԵԼԵԿՈՄ ԱՐՄԵՆԻԱ» ՓԲԸ՝ ներառյալ «ՏԵԼԵԿՈՄ ԱՐՄԵՆԻԱ» ԲԲԸ կողմից մատուցվող ծառայություններից:

2.12 Հիմնական պայմանագիր «ՏԵԼԵԿՈՄ ԱՐՄԵՆԻԱ» ԲԲԸ կողմից հաճախորդի հետ կնքվող պայմանագիր, որին կից կարող են ներկայացվել այլ ծառայությունների մատուցման նոր՝դիմում հայտեր, իսկ իրավաբանական անձի դեպքում՝ **Շրջանակային պայմանագրին** կից **Հավելվածներ**:

2.13 Բաժանորդային Պայմանագիր՝ Սույն Պայմանների 4.4 կետում սահմանված փաստաթղթերի ամբողջություն, որոնց հիմքով Հիմնական Պայմանագրի շրջանակում Բաժանորդին մատուցվում են ծառայություններ:

2.14 Դիմում-հայտ՝ Օպերատորի կողմից մատուցվող Ծառայություններին բաժանորդագրվելու փաստաթղթի ձևանմուշ կամ Հավելված, որով հաճախորդը/բաժանորդը ընտրում է Ծառայությունների ցանկը և/կամ այն Սակագնային Փաթեթը(ները), որի (որոնց) պայմաններով ցանկանում է ստանալ Ծառայություն(ներ)ը:

2.15 Բաժանորդ՝ ցանկացած անձ, ում հետ կնքվել է Բաժանորդային Պայմանագիր:

2.16 Հաճախորդ՝ ցանկացած անձ, ով դիմել է Օպերատորին մատուցվող ծառայությունների վերաբերյալ տեղեկատվություն ստանալու, ծառայություններին բաժանորդագրվելու կամ վաճառքի ենթակա սարքեր, սարքավորումներ ձեռք բերելու համար:

2.17 Կորպորատիվ Բաժանորդ՝ առևտրային և ոչ առևտրային կազմակերպություններ, անհատ ձեռնարկատերեր, ում հետ կնքվել է Բաժանորդային Պայմանագիր:

2.18 Կողմ(եր)՝ Օպերատոր և/կամ Բաժանորդ:

2.19 Տարածք՝ բնակարան/բնակելի տուն, առանձնատուն, գործունեության հասցե կամ այդ նպատակին ծառայող տարածք, որտեղ Բաժանորդը ցանկանում է ստանալ Օպերատորի Ամրակցված ցանցով՝ այդ թվում ինտերնետի և այլ ծառայությունների ներառմամբ, սակագնային փաթեթներով մատուցվող Ծառայություն(ներ)ը:

2.20 Բիլինգային համակարգ՝ ավտոմատացված համակարգ, որի միջոցով հաշվառվում է Բաժանորդին մատուցված Ծառայությունների տեսակը, ծավալը, արժեքը, ձևավորվում են հաշիվները, հաշվարկվում են Բաժանորդների պարտքերը, ստացված վճարումները և ներկայացվում ամփոփ արդյունքները (քաղվածք):

2.21 Հաշիվ՝ Բիլինգային համակարգում վերլուծական հաշվարկի ռեգիստր, որն օգտագործվում է Հաշվարկային ժամանակահատվածում Բաժանորդին մատուցվող Ծառայուունների ծավալների և դրանց դիմաց գանձվող վճարումների հաշվառման համար և ներկայացվում Բաժանորդին՝ վճարման:

2.22 Հաշվարկային ժամանակաշրջան՝ օրացուցային ամիս, որի ընթացքում հետվճարային համակարգի Բաժանորդներին մատուցվել են ծառայությունները: Կանխավճարային համակարգի բաժանորդների համար սահմանվում են այլ ժամկետներ:

2.23 Բիլինգի Օր՝ հաշվարկային ժամանակաշրջանին հաջորդող ամսվա որոշակի օր, երբ ամփոփվում է հաշվարկային ժամանակաշրջանում հետվճարային համակարգի Բաժանորդին մատուցված Ծառայությունների դիմաց հաշվարկված և Բաժանորդի կողմից վճարման ենթակա գումարը, որի հիմքով ձևավորվում է հաշիվը (այն լինում է ամսվա մեջ մեկ օր):

2.24 AN (account number) թվերի համակցություն- օգտագործվում է Բիլինգային համակարգում բաժանորդի նույնականացման նպատակով, որը միաժամանակ համարվում է բաժանորդային պայմանագրի համարը:

2.25 Գաղտնաբառ՝ Ծառայության որոշակի տեսակներից օգտվելու, ինչպես նաև Անձնական գրասենյակ մուտք գործելու համար բաժանորդի կողմից որոշվող տառերի, նշանների և/կամ թվերի համակցություն, որն օգտագործվում է բաժանորդի նույնականացման համար:

2.26 Սակագնային Փաթեթ(ներ)՝ Օպերատորի հրապարակային առաջարկ, որը սահմանում է մեկ կամ մի քանի տեսակի ծառայությունից, այդ թվում Փաթեթներից օգտվելու սակագները, պայմանները, առանձնահատկությունները և այլ տեղեկություններ:

2.27 Ծառայությունների Փաթեթ(ներ)՝ ամրակցված և բջջային ցանցերի տարբեր՝ այդ թվում TV Ծառայություններ իր մեջ ներառող և մեկ անվանմամբ ու արժեքով (սակագնով) հաշվարկվող Ծառայությունների ամբողջություն:

2.28 Բջջային կապի Ծառայությունների փաթեթ - որոշակի վավերականության ժամկետով ռոպեների, ինտերնետ MB-ի, կարճ հաղորդագրությունների և այլ ծառայությունների ներառմամբ

փաթեթ, որից կարելի է օգտվել առանց ընթացիկ Սակագնային փաթեթը փոխելու անհրաժեշտության:

2.29 Հեռախոսի համար՝ ՀՀ համարագրման պլանից Օպերատորին, իսկ շարժական հեռախոսակապից և/կամ Համարի Տեղափոխելիության ծառայությունից օգտվելու պարագայում նաև էլեկտրոնային հաղորդակցության ծառայություններ մատուցող այլ օպերատորին տրամադրված համարային ռեսուրսներից Ծառայությունների մատուցման նպատակով Բաժանորդին հատկացված համար, որով հնարավոր է նաև նույնականացնել Բաժանորդին:

2.30 Համարի Տեղափոխելիության Ծառայություն-շարժական կապի Բաժանորդին հնարավորություն է տալիս փոխել շարժական կապի օպերատորին՝ պահպանելով սկզբնական օպերատորի կողմից իրեն հատկացված շարժական ցանցի հեռախոսահամարը:

2.31 Տրաֆիկ՝ էլեկտրոնային տեղեկատվության միավորների ագրեգացիա, որը ներառում է ձայնային և կարճ հաղորդագրություններ (SMS), ազդակներ/ազդանշաններ և այլ տվյալներ, որոնք փոխանցվում են էլեկտրոնային հաղորդակցության ցանցերի միջոցով:

2.32 Անօրինական տրաֆիկ՝ ձայնային տրաֆիկի և կարճ հաղորդագրությունների (ցանկացած տեսակի SMS) անօրինական ուղղորդում կամ վերջնավորում դեպի օպերատորի ցանց, կամ օպերատորի ցանցի օգտագործմամբ դեպի այլ օպերատորների ցանցեր՝ շրջանցելով օպերատորի և/կամ այլ օպերատորների ցանցերի հետ համակցման կապուղիներն ու կետերը, անկախ կիրառվող տեխնոլոգիաներից և արձանագրություններից (Protocol) :

2.33 Սարք՝ Ամրակցված ցանցով մատուցվող Ծառայություններ տրամադրելու համար Օպերատորի կողմից օգտագործման իրավունքով (հանձնման-ընդունման ակտով) Բաժանորդին տրամադրվող սարք կամ սարքեր՝ իր (իրենց) պատկանելիքներով և մալուխ(ներ)ով:

2.34 Սարքավորում՝ Օպերատորի շարժական ցանցի և SIM քարտի հետ համատեղելի տեխնիկական միջոցներ (պլանշետ, մոդեմ, բջջային հեռախոս և այլն) ու սարքեր, որոնց միջոցով Բաժանորդը կարող է օգտվել Շարժական կապի ցանցով մատուցվող Ծառայություններից:

2.35 SIM քարտ՝ Բաժանորդի նույնականացման միջոց, որը Բաժանորդի Սարքավորման հետ միասին ապահովում է Օպերատորի Շարժական Ցանցին և կապի Ծառայություններին հասանելիություն:

2.36 Անձնական տվյալներ՝ Բաժանորդի անունը, ազգանունը, ծննդյան տարին, ամիսը և ամսաթիվը, անձը հաստատող փաստաթղթի այլ տվյալներ, որոնք թույլ են տալիս կամ կարող են թույլ տալ ուղղակի կամ անուղղակի կերպով նույնականացնել Բաժանորդի ինքնությունը

2.37 Անձը հաստատող փաստաթուղթ՝ ՀՀ Կառավարության Որոշմամբ հաստատված ցանկին համապատասխան անձի ինքնությունը հաստատող փաստաթուղթ (ԱՀՓ), որի պատճենը կցվում է հաճախորդի/բաժանորդի դիմում-հայտին և հանդիսանում Հիմնական պայմանագրի անբաժանելի մասը:

2.38 Պահպանման աշխատանքներ՝ Օպերատորի Ցանցի վերազինման, վերականգնման, վերանորոգման, թարմացման, ընդլայնման, փոխարինման, պահպանման, ամրապնդման,

վերադասավորման, ինչպես նաև վթարների, թերությունների և անսարքությունների վերացման կամ նմանատիպ այլ աշխատանքներ:

2.39 Team Energy հավելված՝ սմարթֆոնների, պլանշետների և այլ շարժական սարքերում աշխատելու համար նախատեսված ծրագրային հավելված, որը մշակվել է IOS, Android և այլ համակարգերի համար և ապահովում է ԷԼԿ-ների օգտագործման հնարավորություն՝ էլեկտրական մեքենաների մարտկոցները լիցքավորելու համար:

Ավելին՝ https://www.telecomarmenia.am/hy/team-applications/6/

2.40 Էլեկտրական տրանսպորտի լիցքավորման ծառայություն՝ էլեկտրական մեքենաների մարտկոցների լիցքավորումը Օպերատորի լիցքավորման կայաններում, ինչը կառավարվում է Team Energy ծրագրային հավելվածի միջոցով; Ծառայության ծավալը գնահատվում է կՎտժ-ով: Էլեկտրական տրանսպորտի լիցքավորման Ծառայությունը չի համարվում էլեկտրաէներգիայի մատակարարում, վաճառք կամ վերավաճառք:

2.41 Էլեկտրական լիցքավորման կայան (ԷԼԿ)՝ էլեկտրական մեքենաների լիցքավորման կայան, որտեղ հաճախորդներին մատուցվում են Էլեկտրական տրանսպորտի լիցքավորման ծառայություններ: ԷԼԿ-ների ցանկը նշված է Team Energy հավելվածում:

2.42 Լիցքավորում՝ էլեկտրական մեքենայի մարտկոցի լիցքավորում, որը տևում է էլեկտրական մեքենայի մարտկոցի լիցքավորումը սկսելու պահից մինչև մարտկոցի լիցքավորման դադարեցումը:

2.43 Լիցքավորման սեսիա - Ծառայության մատուցման ժամանակահատված, որի ընթացքում լիցքավորվում է էլեկտրական մեքենայի մարտկոցը:

2.44 Լայնաշերտ ինտերնետ հասանելիության՝ ծառայությունների տվյալների հոսքի ներբեռնման և վերբեռնման արագությունը **Օպերատորի** հանրային էլեկտրոնային հաղորդակցության ցանցի հետ վերջնակետային սարքավորման միացման արագությունն է (ամրակցված կապի ցանցի դեպքում՝ լարային միացմամբ), ըստ որի՝

1) առավելագույն (գովազդվող) արագությունը ամրակցված և շարժական կապի ցանցերի դեպքում՝ Օպերատորի կողմից հրապարակային առաջարկներում, առևտրային հաղորդակցություններում (գովազդ, մարքեթինգ, սակագնային փաթեթներ և պլաններ) օգտագործվող արագությունն է,

2) նվազագույն արագությունը, ամրակցված կապի ցանցի դեպքում Օպերտորի կողմից բաժանորդին մատուցվող տվյալների հոսքի ամենացածր արագությունն է, որի մեծությունը պետք է կազմի տվյալ սակագնային փաթեթով (պլանով) նախատեսված առավելագույն (գովազդվող) արագության առնվազն 20 տոկոսը, սակայն ոչ պակաս, քան ինտերնետ հասանելիության ծառայությունների տվյալների հոսքի ներբեռնման և վերբեռնման 2 Մբիթ/վ արագությունը,

3) նվազագույն արագությունը շարժական կապի ցանցի դեպքում՝ Օպերատորի կողմից իր լայնաշերտ ինտերնետային բացօթյա ծածկույթի շրջանակում մատուցվող ինտերնետ հասանելիության ծառայությունների տվյալների հոսքի ներբեռնման և վերբեռնման արագությունն է, սակայն ոչ պակաս, քան 512 Կբ/վ արագությունը, և որն ապահովում է բաժանորդներին նշված

ծառայությունների նվազագույն հասանելիությունը՝ հաշվի առնելով Օպերատորի կողմից սույն Պայմանների 6.19 կետում ամրագրված դրանց վրա ազդող էական գործոնները:

4) սովորաբար հասանելի արագությունը, ամրակցված կապի ցանցի դեպքում՝ Օպերատորի կողմից յուրաքանչյուր օրվա (ժամը 00:00-ին սկսվող և 23:59-ը ներառյալ ավարտվող ժամանակահատված) առնվազն 95 տոկոս ժամանակահատվածում բաժանորդին մատուցվող՝ տվյալ սակագնային փաթեթով (պլանով) նախատեսված առավելագույն (գովազդվող) արագության առնվազն 70 տոկոսը կազմող, սակայն ոչ պակաս, քան ինտերնետ հասանելիության ծառայությունների տվյալների հոսքի ներբեռնման և վերբեռնման 2 Մբիթ/վ արագությունն է:.

ԲԱԺԻՆ 3

Մատուցվող Ծառայություններ

3.1 Սույն Պայմանների շրջանակում Օպերատորի կամ որոշ ծառայությունների դեպքում Օպերատորի կողմից նախընտրած երրորդ անձի հետ համատեղ մատուցվում են հետևյալ Ծառայությունները՝

- **Ամրակցված կապի ծառայություններ.**
  - Լայնաշերտ ինտերնետ հասանելիության ծառայություններ
  - Տեսավարձույթի ծառայություն (VOD)
- **Բջջային կապի ծառայություններ, այդ թվում.**
  - Տեսազանգի ծառայություններ (videocall)
  - Տվյալների փոխանցման ծառայություններ (DATA)
  - Կարճ հաղորդագրությունների ծառայություն (SMS)
- **IP հեռուստատեսության ծառայություն (IP TV, OTT, տեսավարձույթ), (TV ծառայություններ)**
- **Հավելյալ արժեքով ծառայություններ (VAS)**
- **Ֆրիֆոն ծառայություններ**
- **Կորպորատիվ բաժանորդներին տրամադրվող VPN, ICloud, Hosting և այլ ծառայություններ**
- **Ինտերնետի, WIFI տրամադրման/ակտիվացման ծառայություն**
- **Լրացուցիչ սարքերի տրամադրման և լրացուցիչ մալուխների մոնտաժման ծառայություն**
- **Հավելվածներով Օպերատորի կողմից տրամադրվող ծառայությունների համար վճարում կատարելու ծառայություն**
- **Էլեկտրական տրանսպորտի լիցքավորման ծառայությունների մատուցում**
- **Հեռահաղորդակցության և այլ ծառայություններ:**

ԲԱԺԻՆ 4

Բաժանորդագրում, Բաժանորդային պայմանագիր

4.1 Առաջին անգամ Ծառայություններին բաժանորդագրման համար Հաճախորդի կողմից առձեռն կամ էլեկտրոնային եղանակով, այդ թվում՝ Օպերատորի կայքի կամ My Team հավելվածի միջոցով էլեկտրոնային եղանակով ներկայացված դիմում հայտի հիմքով, կնքվում է Հիմնական (Շրջանակային) պայմանագիր, որին կցվում է Բաժանորդի անձը հաստատող փաստաթղթի (ԱՀՓ) սքանը և համարվում դրա անբաժան մասը՝ հավելվածը:

Օտարերկրյա քաղաքացիների հետ Օպերատորի My Team հավելվածի միջոցով էլեկտրոնային եղանակով Պայմանագիրը կնքվում է միայն ինտերնետ հասանելիության ծառայությունների մատուցման հնարավորությամբ:

4.2 Դիմում-հայտում Բաժանորդն ընտրում է Ծառայությունների ցանկը և/կամ այն Սակագնային/Ծառայությունների Փաթեթ(ներ)ը, որի (որոնց) պայմաններով ցանկանում է ստանալ Ծառայությունները:

4.3 Բաժանորդային Պայմանագիր կնքելու համար Դիմում-հայտին կից ներկայացվում են Օպերատորի կողմից պահանջվող այլ փաստաթղթեր, որոնք հաստատում են ֆիզիկական անձի ինքնությունը (ԱՀՓ), հաշվառման/բնակության, ամրակցված ցանցի ծառայությունների դեպքում՝ դրա (դրանց) մատուցման հասցեն, իրավաբանական անձի դեպքում՝ պետական գրանցման կամ հարկային հաշվառման տվյալները, տնօրենի, իսկ անհրաժեշտության դեպքում նաև լիազորվածի անձը հաստատող փաստաթուղթը, լիազորագիր և այլն (այսուհետ՝ Պահանջվող Փաստաթղթեր):

4.4 Հիմնական պայմանագիրը, դրան կից նոր ծառայություններին բաժանորդագրվելու դիմում-հայտերը սույն Պայմանների, կնքված համաձայնագրերի, առանձին Ծառայությունների մատուցման հատուկ առաջարկների, սակագների, Ծառայությունների/Սակագնային Փաթեթների վերաբերյալ Օպերատորի կայքում, My Team, Team Energy հավելվածներում հրապարակված նկարագրության, պայմանների ու սակագների, ինչպես նաև յուրաքանչյուր Ծառայությունից օգտվելու ընթացակարգերի, Անձնական տվյալների մշակման քաղաքականության հետ միասին հանդիսանում է **բաժանորդային պայմանագիր**:

4.5 Նշված փաստաթղթերի միջև տարընթերցումների և հակասությունների առկայության դեպքում դրանք կիրառվում են հետևյալ գերակայությամբ՝ Հիմնական պայմանագիր, Դիմում-հայտ, Անձը հաստատող փաստաթուղթ, համաձայնագրեր, Հատուկ Պայմաններ, սույն Պայմաններ, Ծառայությունների/Սակագնային փաթեթներ, Սակագներ:

4.6 Հիմնական Պայմանագիր կնքելիս բաժանորդի անձնական տվյալները ավտոմատ կարգով համակարգ ներբեռնելու, իսկ հետագայում դրանցում ճշտումներ կատարելու նպատակով Օպերատորն իրավասու է Բնակչության պետական ռեգիստրում (ԷԿԵՆԳ) կատարել հարցումներ:

4.7 Պայմանագրում Բաժանորդի անձնական տվյալների վրիպակների դեպքում Օպերատորն իրավունք ունի կատարելու ուղղումներ Հիմնական պայմանագրի անբաժան մասը հանդիսացող Անձը հաստատող փաստաթղթին համապատասխան:

4.8 Բաժանորդի Անձնական տվյալներն օգտագործվում են «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքով, սույն Պայմանների անբաժան մասը հանդիսացող Օպերատորի կողմից մշակված «Անձնական տվյալների մշակման ծանուցում/Անձնական տվյալների պաշտպանության Քաղաքականությամբ» սահմանված նպատակներով:

4.9 Օպերատորի կողմից առաջարկվող Ծառայությունների տեսակները, դրանց նկարագրությունը, ամրակցված և շարժական կապի ցանցերով ինտերնետ հասանելիության ծառայության տվյալների հոսքի ներբեռնման և վերբեռնման նվազագույն, առավելագույն (գովազդվող) արագությունների՝ ըստ ցանցային տեխնոլոգիաների, դրանց վրա ազդող էական գործոնների, ինչպես նաև ծառայության մատուցման առանձնահատկությունների ու սակագների վերաբերյալ տեղեկատվությունը հասանելի է Օպերատորի կայքում, Վաճառքի և սպասարկման կենտրոններում, Անձնական գրասենյակի, My Team հավելվածի միջոցով:

4.10 Ըստ մատուցվող Ծառայության առանձնահատկությունների՝ Օպերատորն իրավունք ունի այդ Ծառայությունից օգտվելու Դիմում-հայտ ներկայացրած անձի կամ անձանց խմբերի համար սահմանել այլ պայմաններ, որոնք կամրագրվեն Առաջարկի Նկարագրով և/կամ դիմում-հայտով:

4.11 Մատուցվող ծառայություններից օգտվելու պայմանագիր կնքելու/լուծելու, դրանում փոփոխություններ և լրացումներ կատարելու, ինչպես նաև հավելյալ այլ ծառայություններ մատուցելու դիմում-հայտերի ձևերը և բովանդակությունը սահմանվում են Օպերատորի կողմից և հասանելի են Վաճառքի և սպասարկման կենտրոններում և/կամ ինտերնետային կայքում: Բաժանորդի կողմից դիմում-հայտերի ձևերը չպահպանելու դեպքում Օպերատորն իրավունք ունի չընդունել դրանք և/կամ ընթացք չտալ:

4.12 Բաժանորդի հետ կարող է կնքվել ինչպես որոշակի ժամկետով Բաժանորդ մնալու պարտավորությամբ պայմանագիր, որի ժամկետը լրանալուց հետո այն համարվում է անորոշ ժամկետով կնքված, այնպես էլ որոշակի ժամկետով բաժանորդագրման պարտավորությամբ կնքված և ինքնաբերաբար երկարաձգում նախատեսող Պայմանագիր, որի ժամկետի ավարտին այն երկարաձգվում է հաջորդ ժամկետով, եթե չի լուծվում բաժանորդի կամ Օպերատորի նախաձեռնությամբ:

4.13 ՀՀ օրենսդրության շրջանակներում Օպերատորն իրավունք ունի հրաժարվել Բաժանորդային Պայմանագիրը կնքելուց և/կամ Ծառայություններին կամ դրանց մի մասին հասանելիություն ապահովելուց հետևյալ հիմքերից թեկուզ մեկի առկայության դեպքում՝

4.13.1 Հաճախորդը/բաժանորդը Օպերատորի նկատմամբ ունի չկատարված պարտավորություններ և/կամ սահմանված ժամկետներում վճարումները չկատարելու դեպքում, միակողմանի կարգով հրաժարվել է Բաժանորդային Պայմանագիրը կատարելուց՝ լուծված համարելով այն:

4.13.2 Տարածքը գտնվում է Ցանցի ծածկույթից դուրս կամ գտնվում է Ցանցի ծածկույթի սահմաններում, սակայն Ծառայությունների մատուցման համար տեխնիկական հնարավորությունները բացակայում են/սպառվել են (օրինակ՝ մալուխների քանակն այդ

տարածքում/շենքում, կամ տվյալ հասցեում մալուխներ անցկացնելու համար չկան անհրաժեշտ ենթակառուցվածքներ. դիտահորեր, հենասյուներ և այլն) կամ բացակայում են անհրաժեշտ թույլտվություններ/համաձայնություններ՝ Ծառայությունների մատուցմանն ուղղված աշխատանքների կատարման համար, լիազոր մարմինը թույլ չի տալիս իրականացնելու շենքում մալուխներ մոնտաժելու աշխատանքներ:

4.13.3 Օպերատորի կողմից Տարածքում մեկ այլ Բաժանորդային պայմանագրի շրջանակներում արդեն իսկ մատուցվում են պահանջվող Ծառայությունները:

4.13.4 Բաժանորդը Օպերատորի նկատմամբ ունի չկատարված պարտավորություններ. չի վճարել նախկինում իրեն մատուցված ծառայությունների դիմաց:

4.13.5 Բաժանորդը, նախկինում օգտվելով Օպերատորի կողմից առաջարկվող Ծառայություններից (այդ թվում՝ խթանիչ առաջարկներից), խախտել է Բաժանորդային Պայմանագրի պայմանները, չի կատարել վճարումներ կամ թույլ է տվել կեղծիքներ կամ չարաշահումներ:

4.13.6 Օպերատորի կողմից սահմանված ձևով չեն ներկայացվել պահանջվող փաստաթղթերը՝ Դիմում-հայտը և/կամ այլ անհրաժեշտ տեղեկությունները:

4.13.7 Բաժանորդի կողմից ներկայացված փաստաթղթերում կամ տեղեկություններում առկա են կեղծիքներ կամ սխալ տվյալներ:

4.13.8 Վճարունակության ստուգման ընթացակարգերի առկայության դեպքում Ծառայությանը բաժանորդագրվելու համար դիմող անձը գնահատվում է անհուսալի պարտապան կամ չի բավարարում Օպերատորի կողմից տվյալ Ծառայության համար սահմանված վճարունակության և նմանատիպ այլ պահանջները:

4.13.9 Տարածքը, որտեղ պետք է ֆիզիկական անձին մատուցվեն Ամրակցված ցանցի Ծառայությունները, Օպերատորի գնահատմամբ հանդիսանում կամ ծառայում է որևէ իրավաբանական անձի և/կամ անհատ ձեռնարկատիրոջ փաստացի գործունեության վայր և/կամ ֆիզիկական անձի կողմից շահույթ ստանալու կամ այլ տնտեսական գործունեություն իրականացնելու նպատակով օգտագործվող տարածք:

4.13.10 Տարածքի սեփականատերը և/կամ համասեփականատերը կամ տվյալ տարածքում մշտական հաշվառում ունեցող անձը դիմել է Օպերատորին՝ Տարածքում Ծառայությունների մատուցումը դադարեցնելու համար:

4.13.11 Որոշ դեպքերում, եթե դիմողը չունի մշտական բնակության վայր ՀՀ-ում, հաշվառված չէ ՀՀ տարածքում, ՀՀ քաղաքացի չէ կամ ՀՀ-ում չունի համապատասխան կացության կարգավիճակ և/կամ Օպերատորի կողմից նախատեսված այլ դեպքերում, Օպերատորը կարող է հրաժարվել Բաժանորդային Պայմանագիր կնքելուց կամ դրա կնքման համար կարող է առաջադրել լրացուցիչ պահանջներ կամ պայմաններ, այդ թվում՝ պահանջել պարտավորությունների կատարման ապահովման միջոցներ (դեպոզիտ):

4.14 Բաժանորդային Պայմանագիր կնքելուց, Ծառայություններին կամ դրանց մի մասին հասանելիություն ապահովելուց, Սարքավորումների վաճառքից կամ զումարային սահմանաչափի

սահմանումից կամ փոփոխումից առաջ Օպերատորն իրավունք ունի իրականացնել բաժանորդի վճարունակության ստուգում օրենքով չարգելված ցանկացած եղանակով և աղբյուրից, այդ թվում՝ Բաժանորդից պահանջելով ներկայացված տեղեկատվությունը հիմնավորող լրացուցիչ փաստաթղթեր, կատարելով համապատասխան հարցումներ և/կամ պահանջել լրացուցիչ ապահովման միջոցներ:

4.15 Օպերատորն իրավունք ունի սահմանափակել յուրաքանչյուր Բաժանորդին տրամադրվող Սարքերի, Սարքավորումների և SIM քարտի կամ Ծառայությունների քանակը:

4.16 Կապ հաստատելով հաճախորդների սպասարկման կենտրոնի հետ զանգի կամ կապի այլ միջոցներով և անցնելով Բաժանորդի նույնականացման փուլը՝ Բաժանորդը կարող է այնպիսի փոփոխություններ կատարել Բաժանորդային Պայմանագրում, որոնք թույլատրելի են համարվում Օպերատորի կողմից:

4.17 Օպերատորը՝ առանձին դեպքերում (սույն կետում նշված պայմաններով) հեռախոսակապով կարող է հանդես գալ Բաժանորդին հասանելի առաջարկություններով, որոնցից օգտվելու Բաժանորդի ցանկության դեպքում Բաժանորդային պայմանագրում փոփոխություն կատարելու որևէ գրավոր փաստաթուղթ Կողմերի միջև չի կնքվում, իսկ հավաստումը (ապացույցը) առ այն, որ Բաժանարոդային Պայմանագրում փոփոխությունները կատարվել են և ընդունելի են Բաժանորդի կողմից, հանդիսանում է Բաժանորդի կողմից կատարված առաջին վճարումը:

4.18 Բաժանորդի ներկայացուցչին Բաժանորդի անունից գործողություններ կատարելու լիազորություն տրամադրող փաստաթղթի գործողության դադարեցման կամ անվավերության դեպքում Բաժանորդը պարտավոր է անմիջապես տեղեկացնել Օպերատորին: Մինչև նման փոփոխության մասին Օպերատորին տեղեկացնելը/չտեղեկացնելը բաժանորդի ներկայացուցչի պահանջների կատարմանն ուղղված Օպերատորի գործողությունները և դրանց արդյունքում ծագած պարտավորությունները համարվում են իրավաչափ և կատարված բաժանորդի անունից:

4.19 Համարի տեղափոխություն այլ Օպերատորի Ցանց կամ նոր բաժանորդային պայմանագրի կնքում, վերծանումների ստացում, ինչպես նաև Օպերատորի կողմից ներքին լիազորագրում չներառված մի շարք այլ գործարքների դեպքում բաժանորդի ներկայացուցիչը պետք է ներկայացնի նման իրավասություն տվող նոտարական հաստատմամբ կամ նոտարական կարգով վավերացրած լիազորագրերին հավասարեցված լիազորագրի բնօրինակը:

ԲԱԺԻՆ 5

Ծառայությունների մատուցման կարգը և պայմանները

5.1 Ծառայությունները, ըստ իրենց տեսակի, մատուցվում են Օպերատորի Ամրակցված և/կամ Շարժական կապի ցանցերով, որոնցից յուրաքանչյուրն ունի իր մատուցման Կանոններն ու առանձնահատկությունները:

5.2 Օպերատորի կողմից Ամրակցված և/կամ Շարժական կապի ցանցերով ծառայությունները մատուցվում են Կանխավճարային և Հետվճարային համակարգերով:

5.3 Օպերատորի կողմից նախատեսված դեպքերում՝ Ծառայությունները կարող են մատուցվել Օպերատորի կողմից նախընտրած երրորդ անձանց կողմից կամ համատեղ: Օպերատորը կարող է Բաժանորդին հասանելի դարձնել երրորդ անձանց կողմից մատուցվող ծառայություններ՝ նման երրորդ անձանց հետ հարաբերություններում հանդես գալով որպես Բաժանորդի գործակալ, որը գործում է իր անունից, սակայն Բաժանորդի հաշվին և հանձնարարությամբ:

5.4 Ծառայությունների տեսակների և սակագների, Առաջարկի նկարագրի, Սակագնային Փաթեթների, պարտքերի և գանձված գումարների վերաբերյալ տեղեկատվություն Բաժանորդը կարող է ստանալ Վաճառքի և սպասարկման կենտրոնում, Զանգերի կենտրոնից, Անձնական գրասենյակից, My Team հավելվածի միջոցով:

5.5 Բաժանորդագրման տեսակը, Ծառայությունների փաթեթը, Սակագնային Փաթեթը և/կամ Ծառայությունները ընտրում է Բաժանորդը՝ իր պահանջներին համապատասխան:

5.6 Բաժանորդային Պայմանագիր կնքելիս Օպերատորի կողմից լռելյայն ակտիվացվում են այն հավելյալ Ծառայությունները, որոնց համար լրացուցիչ վճարներ չեն պահանջվում (եթե այլ բան սահմանված չէ Օպերատորի կողմից):

5.7 Օպերատորի կողմից մատուցվող որոշ Ծառայություններ Բաժանորդի կողմից կարող են ակտիվացվել ինքնուրույն՝ ձայնային մենյուի, My Team հավելվածի, Բաժանորդի սարքավորման կարգաբերումների միջոցով կամ այլ եղանակով, և Բաժանորդն է կրում այդ կարգաբերումների արդյունքում առաջացած ֆինանսական ռիսկերը:

5.8 Նախքան լրացուցիչ վճարում պահանջող Ծառայությունների ակտիվացումը, Բաժանորդը պարտավոր է ստուգել պատվիրվող Ծառայությունն օգտագործելու համար իր սարքավորման հնարավորություններն ու սահմանափակումները՝ հասկանալու համար, թե արդյո՞ք կարող է տվյալ սարքավորմամբ օգտվել ակտիվացվող Ծառայությունից: Հնարավոր ռիսկերը այս դեպքում կրում է Բաժանորդը:

5.9 Որոշ Ծառայություններ Բաժանորդին կարող են մատուցվել միայն, եթե Բաժանորդի վերջնակետային սարքավորումը համապատասխանում է նման Ծառայություններից օգտվելու համար անհրաժեշտ տեխնիկական հնարավորություններին:

5.10 Օպերատորի կողմից սահմանված կարգով դիմում-հայտը և Պահանջվող փաստաթղթերը ներկայացնելով առձեռն, համաձայնագիր կնքելով, իսկ Օպերատորի կողմից սահմանված դեպքերում նաև կապի այլ միջոցներով, այդ թվում առցանց եղանակով, Բաժանորդն իրավունք ունի փոխել բաժանորդագրման տեսակը, Սակագնային փաթեթը կամ միևնույն Սակագնային փաթեթում լրացուցիչ ակտիվացվող ծառայությունների ցանկը: Օպերատորն իրավունք ունի սահմանել լրացուցիչ վճար յուրաքանչյուր այդպիսի փոփոխության համար:

5.11 Ծառայությունների/Սակագնային փաթեթների փոփոխությունների դեպքերում Բաժանորդի Հաշվին առկա բոնուսները, ավտոմատ գեներացված առաջարկներն ու ծառայությունները, ինչպես նաև այլ արտոնությունները ենթակա չեն վերադարձման կամ փոխանցման նոր Հաշվին, Համարին և/կամ Ծառայությանը, եթե այլ բան չի սահմանվում Օպերատորի կողմից:

5.12 Բաժանորդի Անձնական տվյալներն օգտագործվում են Ծառայությունների/Սակագնային փաթեթների բաժանորդագրման տեսակի, Ծառայությունների (դրանց տեսակների) փոփոխության և լրացուցիչ Ծառայությունների ակտիվացման, ինչպես նաև Օպերատորի կողմից Բաժանորդին տեղեկատվության տրամադրման, Ծառայությունների դիմաց վճարումներ կատարելու և Օպերատորի կողմից սահմանված այլ դեպքերում:

5.13 Ծառայության մի առաջարկից, որը ենթադրում է որոշակի ժամկետում Օպերատորի Բաժանորդ մնալու պարտավորություն, մեկ այլ առաջարկի անցումը (առանց Բաժանորդային Պայմանագրով/համաձայնագրով նախատեսված տուգանքը, հրաժարագինը վճարելու) հնարավոր է միայն սահմանված ժամկետի ավարտից հետո, իսկ մինչև դրա ավարտը՝ միայն Օպերատորի բացառիկ հայեցողությամբ, հակառակ դեպքում նման անցումը կդիտվի որպես Բաժանորդի ստանձնած պարտավորության խախտում և Օպերատորն իրավունք կունենա պահանջելու սահմանված արժեքների տարբերությունը, տուգանքները, հրաժարագինը:

5.14 Բաժանորդային Պայմանագրի կողմ դառնալով՝ Բաժանորդը տալիս է իր համաձայնությունը Օպերատորի Ցանցի (և ոչ միայն) միջոցով ստանալու այլ կազմակերպությունների կողմից ուղարկվող գովազդային, առևտրային և/կամ այլ հաղորդագրություններ, նյութեր և/կամ տեղեկություններ :

5.15 Պետական, գործադիր և տեղական ինքնակառավարման մարմիններին մատուցվող ծառայությունների համար սահմանվում են «Գնումների մասին» ՀՀ օրենքին համապատասխանող Պայմաններ:

ԲԱԺԻՆ 6

Ծառայությունների մատուցումը

6.1 Օպերատորը Ծառայությունները մատուցում է ՀՀ օրենսդրությանը, իրեն տրամադրված լիցենզիաներին և թույլտվություններին, Բաժանորդային Պայմանագրին, սույն Պայմաններին, Օպերատորի ներքին ընթացակարգերին և քաղաքականություններին համապատասխան:

6.2 Օպերատորի կողմից սահմանված դեպքերում Ծառայությունները կարող են մատուցվել Օպերատորի և իր կողմից նախընտրած երրորդ անձանց կողմից համատեղ:

6.3 Համատեղ մատուցվող ծառայություններ ստանալու նպատակով Դիմում-հայտ ներկայացնելով և Բաժանորդային պայմանագիր կնքելով՝ Բաժանորդը անվերապահորեն ընդունում է նաև համատեղ մատուցվող ծառայություններ մատուցելու նպատակով Օպերատորի կողմից նախընտրած երրորդ անձի ծառայությունների մատուցման պայմանները:

6.4 Հեռուսատեսային ծառայությունները կարող են մատուցվել Օպերատորի և Տեսալսողական մեդիա ծառայություն մատուցող այլ անձի հետ համատեղ: Ծառայությունների մատուցման պայմանները հասանելի են ընկերության կայքի https://www.telecomarmenia.am/hy/team-applications/3/ հղումով:

6.5 Էլեկտրական տրանսպորտի լիցքավորման ծառայությունները կարող են մատուցվել Օպերատորի և/կամ այլ անձի հետ համատեղ: Ծառայությունների մատուցման պայմանները հասանելի են ընկերության կայքի https://www.telecomarmenia.am/hy/team-applications/6/ Team Energy հավելվածում:

6.6 Շարժական կապի Ծառայություններ մատուցելու համար Բաժանորդին տրամադրում է SIM քարտ և Համար: SIM քարտի սեփականատերը (բացառությամբ դրա վրա գտնվող Բաժանորդի սեփականությունը հանդիսացող տեղեկատվության) Օպերատորն է:

6.7 Համարը հատկացվում է համաձայն Օպերատորի կողմից սահմանված Կարգի և Բաժանորդը իրավունք չունի պահանջելու որոշակի Համար, եթե այդ Կարգի համաձայն այն տրամադրելու համար սահմանված են այլ պայմաններ:

6.8 Որոշակի նախընտրելի, գեղեցիկ համարի ընտրության/տրամադրման համար Օպերատորը կարող է սահմանել լրացուցիչ վճար կամ լրացուցիչ պարտավորություններ:

6.9 Ամրակցված ցանցի հեռախոսի տեղադրման ծառայության մատուցման տեխնիկական հնարավորության բացակայության/սպառման մասին՝ նույնիսկ պայմանագրի կնքումից հետո, Օպերատորը սահմանված ժամկետում տեղեկացնում է դիմորդին՝ նշելով մերժման հիմնավորումները:

6.10 Ամրակցված կապի ցանցով Ծառայություններ, ներառյալ ինտերնետ հասանելիություն, մատուցելու համար Բաժանորդային Պայմանագրի կնքումից հետո Բաժանորդի Տարածքում Օպերատորի մասնագետների կողմից տեղադրվում և կարգաբերվում է ենթակառուցվածքը (Սարքը) և միացվում Օպերատորի Ամրակցված Ցանցին: Ծառայության միացման կամ ակտիվացման (վերաակտիվացման) համար անհրաժեշտ ժամանակահատվածը՝ նոր բաժանորդների դեպքում, չպետք է գերազանցի 10 (տասն) աշխատանքային օրը:

6.11 Եթե Ամրակցված ցանցի ծառայությունների մատուցման Բաժանորդային պայմանագրի կնքումից հետո պարզվում է, որ տեխնիկական պայմանները բացակայում են կամ սահմանված ժամկետոում հնարավոր չի լինում կապ հաստատել Բաժանորդի հետ, Օպերատորն իրավունք ունի լուծելու Բաժանորդային պայմանագիրը, այդ մասին տեղեկացնելով դիմորդին՝ նշելով հիմնավորումները, իսկ եթե բաժանորդը չի ցանկանում այլևս օգտվել նշված ծառայությունից՝ բաժանորդային պայմանագրի լուծումը իրականացվում է առանց տեղեկացման:

6.12 Եթե Բաժանորդն ունի այնպիսի սերտիֆիկացված սարք, որի միջոցով՝ ըստ Օպերատորի, հնարավոր կլինի պատշաճ և Ցանցի համար անվտանգ օգտվել Ծառայություններից, ապա Բաժանորդի ցանկության դեպքում Օպերատորը կարող է Ամրակցված ցանցով տրամադրվող Ծառայությունները մատուցել այդ սարք(եր)ով:

6.13 Սույնով Բաժանորդը համաձայն է, որ Ծառայությունները մատուցվում են Օպերատորի Ցանցի առկա տեխնիկական հնարավորություններին և թողունակությանը, Ցանցի Ծածկույթին, օգտագործվող սարքավորումների հնարավորություններին ու առանձնահատկություններին համապատասխան և դրանց սահմաններում:

6.14 Օպերատորի Ցանցի տեխնիկական հնարավորությունների, TV ծառայությունների մասին տեղեկությունները Բաժանորդին հասանելի են Օպերատորի կայքում, Վաճառքի և սպասարկման կենտրոններում:

6.15 Բաժանորդի կողմից շարժական կապի Ծառայություններից օգտվելը Ցանցի Ծածկույթի սահմաններում սահմանափակված չէ կոնկրետ տարածքով, եթե այլ բան չի սահմանվում Օպերատորի կողմից կամ չի բխում Ծառայությունների էությունից:

6.16 Օպերատորը, հանդիսանալով սույն Պայմանների 6.17 կետով Բաժանորդի կողմից պատշաճ լիազորված անձ, իրավունք ունի Բաժանորդի անունից բազմաբնակարան կամ ստորաբաժանված շենքում առանց մյուս սեփականատերերի համաձայնության դեպի Բաժանորդի շինությունն (բնակարանը կամ ոչ բնակելի տարածը) անցկացնել մալուխներ, հեռախոսագծեր, տեղադրել բաժանարար տուփեր, սարքավորումներ և այլ կոմունիկացիաներ (ներառյալ այն դեպքերը, երբ այն ամբողջությամբ կամ մասնակիորեն անցկացվելու է ընդհանուր բաժնային սեփականության միջով կամ վրայով, կամ դրա օգտագործմամբ), եթե նման գործողությունները չեն թուլացնում շենքի կրողունակությունը, չեն խոչընդոտում ինժեներային կոմունիկացիաների, շենքի մեխանիկական և այլ սարքավորումների բնականոն գործունեությանը և դրանց հետևանքով չեն խախտվում շինությունների սեփականատերերի՝ իրենց շինությունները տիրապետելու, օգտագործելու և տնօրինելու, ինչպես նաև ընդհանուր բաժնային սեփականությունից օգտվելու իրավունքները:

6.17 Բաժանորդը սույնով հանձնարարում է Օպերատորին Բաժանորդային պայմանագրի գործողության ողջ ժամանակահատվածում իր անունից օրենսդրությամբ սահմանված նորմերի ու կանոնների պահպանմամբ՝ իրականացնել Պայմանների 6.16 կետում նշված գործողությունները և դրանց կատարման համար անհրաժեշտ բոլոր այլ գործողությունները՝ ներառյալ սակայն չսահմանափակվելով, ներկայացնել ծանուցումներ, գրություններ, դիմումներ շենքի կառավարման մարմիններին:

6.18 Բաժանորդը համաձայնում և ընդունում է, որ Օպերատորը ձեռնարկում է հնարավոր ողջամիտ միջոցներն ապահովելու համար Ծառայությունների պատշաճ և շարունակական մատուցումը և Բաժանորդի հասանելիությունը Օպերատորի Ցանցին և Ծառայությանը, սակայն Ծառայությունների պատշաճ և շարունակական մատուցումն ապահովելու Օպերատորի պարտավորությունը լավագույն ջանքերը գործադրելու պարտականություն է և ոչ ավելին:

6.19 Բաժանորդը համաձայնում և ընդունում է, որ Օպերատորի ամրակցված և բջջային ցանցերի Ծառայություններից օգտվելու և/կամ դրանց հասանելիություն ունենալու հնարավորությունը կամ Ծառայությունների որակը կախված է ստորև նշված այնպիսի հանգամանքներից և գործոններից, որոնք կարող են առաջացնել մատուցվող Ծառայության ընդհատումներ, որակի անկում, վատթարացում, ինտերնետ կապի արագության տատանումներ կամ այլ խափանումներ, որոնք դուրս են Օպերատորի վերահսկողությունից: Այդպիսի հանգամանքներ ու գործոններ են՝

6.19.1 ոչ բարենպաստ աշխատանքային միջավայրը (խոնավության, բարձր աստիճան, սարքավորման բնականոն աշխատանքի համար չնախատեսված շատ բարձր կամ ցածր ջերմաստիճան և այլն),

6.19.2 Բաժանորդի սարքավորման որակը, հնարավորություններն ու առանձնահատկությունները, տեխնիկական անսարքությունը կամ սխալ կարգաբերումները (մատուցվող Ծառայության հետ անհամատեղելի օպերացիոն համակարգերը, վիրուսները և այլն),

6.19.3 այլ՝ այդ թվում միջազգային օպերատորների ցանցերի և սարքավորումների որակը, առանձնահատկություններն ու հնարավորությունները, նրանց ցանցում առկա սահմանափակումները, վթարները, անսարքությունները, վերջիններիս աշխատանքային ռեժիմը, ցանցային կամ կայանային վթարները կամ անսարքությունները,

6.19.4 շարժական կապի ցանցով մատուցվող Ծառայությունների և ԹԻՎԻ (TV) ծառայությունների համար՝ եղանակային պայմանները և մթնոլորտային երևույթները, ռադիոալիքների հասանելիությունը սահմանափակող գործոնների ազդեցությունը, Օպերատորի կայանի և սարքավորումների և Բաժանորդի սարքավորման (հեռախոս, մոդեմ և Ծառայություններից օգտվելու համար օգտագործվող այլ սարքավորումներ) միջև եղած հեռավորությունը, ռադիոհաճախականությունների էլեկտրամագնիսական խանգարումները, տեղական ռելիեֆի առանձնահատկությունները, ռադիոալիքների տարածումը և խափանումների այլ աղբյուրների գոյությունը, ինտերֆերենցիաները, հանգամանքներ, որոնք խոչընդոտներ են ստեղծում ռադիոսարքավորումների նորմալ գործունեության համար, Ծառայություններից օգտվելու վայրը (ծածկույթից դուրս տարածք, ստորգետնյա տարածքներ, շենքերին մոտ լինելը, թունելները, նկուղները և այլ ստորգետնյա տարածքները) և ժամանակը (Օպերատորի Ցանցի առավել ծանրաբեռնված ժամեր, միաժամանակյա օգտվողների/օգտագործողների թիվը սպասարկման տվյալ վայրում) և ժամանակը (Օպերատորի Ցանցի առավել ծանրաբեռնված (պիկ) ժամեր, միաժամանակյա օգտվողների/օգտագործողների հոսքը սպասարկման տվյալ վայրում),

6.19.5 Սպասարկման տվյալ վայրում/կետում անցկացվող մասսայական միջոցառումների ժամանակ օգտվողների/օգտագործողների մասսայական կուտակումներ՝ հանրահավաքներ, համերգներ, սպորտային միջոցառումներ, մարդաշատ կուտակումներ, հավաքներ

6.19.6 ֆորս-մաժորային իրավիճակները (ջրհեղեղներ, երկրաշարժեր, պատերազմ, պետական մարմինների որոշումներ, էլեկտրասնուցման խափանումներ, համաճարակներ և այլն),

6.19.7 նմանատիպ այլ հանգամանքներ:

6.20 Ամրակցված և բջջային ցանցերի Ծառայության խափանման կամ անսարքության դեպքում բաժանորդն այդ մասին ծանուցում է Օպերատորի զանգերի կենտրոն: Օպերատորը

կազմակերպում է անսարքությունների վերաբերյալ տեղեկությունների ստացումը և ողջամիտ ժամանակահատվածում վերացնում դրանք: Բաժանորդից անկախ տեխնիկական պատճառներով ծառայությունների որակի անկման կամ ծառայությունների ընդհատման (ներառյալ՝ խափանման կամ անսարքության) դեպքում Օպերատորը պարտավոր է վերականգնել բաժանորդին մատուցվող ծառայությունը՝ ընդհատման, խափանման պատճառի վերացումից հետո 48 ժամվա ընթացքում:

6.21 Մինչև Ծառայություններին բաժանորդագրվելը և դրանք օգտագործելը կարևոր է իմանալ, որ Օպերատորը չի երաշխավորում՝

6.21.1 այնպիսի հանգույցների կամ սերվերների հետ տեղեկատվության փոխանակումը, որոնք ժամանակավոր կամ մշտապես անհասանելի են ինտերնետային ցանցի միջոցով, Ծառայությունների մատուցման ընթացքում ընդհատումների, անսարքությունների, արագության և որակի անկումների, տատանումների և այլ խափանումների ու խաթարումների բացակայությունը, ինչպես նաև Ծառայության հասանելիության անընդհատությունը, որոնք պայմանավորված են սույն Պայմանների 6.19 կետում ամրագրված գործոններով և գործում է Հանձնաժողովի կողմից հարցի վերաբերյալ սահմանված կանոնակարգերով:

6.21.2 Օպերատորի Ցանցի հետ հասանելիության հաստատումը՝ նախապես հայտարարված առավելագույն (գովազդվող), նվազագույն կամ սովորաբար հասանելի արագության հնարավորությամբ,

6.21.3 Օպերատորի Ցանցի անխափան աշխատանքը, անվտանգությունն ու Ծառայության որակն ապահովելու, Օպերատորի Ցանցի հնարավորությունները հավասարաչափ բաշխելու, որևէ կոնկրետ Շարժական ցանցի բազային կայանի վրա գերծանրաբեռնվածությունը նվազեցնելու, ինչպես նաև Ծառայությունների հասանելիությունն ապահովելու համար Օպերատորն ինքն է սահմանում անհրաժեշտ տեխնիկական միջոցները, այդ թվում՝ Օպերատորն իրավունք ունի իր հայեցողությամբ ձեռնարկել իրավիճակին համապատասխան միջոցառումներ, կիրառել Ծառայությունների ծավալի և/կամ արագության սահմանափակումներ և սահմանել առաջնահերթություններ:

6.22 Բաժանորդին անհարմարություն չպատճառելու նկատառումից ելնելով հետվճարային համակարգում Բաժանորդի բացասական հաշվեկշռի սահմանաչափը սպառվելու դեպքում Օպերատորը կարող է չընդհատել այդ պահին մատուցվող ծառայության սեսիան (զանգ, GPRS ռոումինգ), որի դիմաց հաշվարկված գումարը ենթակա է գանձման:

ԲԱԺԻՆ 7

Ծառայություններից օգտվելը

7.1 Ծառայությունից օգտվելիս Բաժանորդի կողմից օգտագործվող սարքավորումը պետք է լինի սերտիֆիկացված, Օպերատորի Ցանցի, Ծառայությունների ու SIM քարտի հետ համատեղելի և համապատասխանի ՀՀ օրենսդրության պահանջներին:

7.2 Բաժանորդը պարտավոր է՝

7.2.1 Ծառայությունից չօգտվել որևէ եղանակով, որը կարող է ազդել Օպերատորի և/կամ այլ օպերատորների էլեկտրոնային հաղորդակցության ցանցերի կամ սարքավորումների ապահով և անխափան աշխատանքի վրա,

7.2.2 մատուցվող Ծառայությունները վճարովի կամ անհատույց չառաջարկել/չմատուցել երրորդ անձանց, այդ թվում չիրականացնել սակագնային փաթեթում ներառված անսահմանափակ ինտերնետ ծավալների տարածմանն ու երրորդ անձանց ինտերնետ հասանելիության ապահովմանն ուղղված գործողություններ,

7.2.3 չիրականացնել գործողություններ չթույլատրված հասանելիություն ստանալու և նման հասանելիությունը օգտագործելու նպատակով,

7.2.4 Ծառայությունները չօգտագործել էլեկտրոնային հեռահաղորդակցության ծառայություններ մատուցելու, գովազդային, տեղեկատվական կամ այլ բնույթի զանգվածային հաղորդագրություններ ուղարկելու, քվեարկություն, վիկտորինաներ, հարցումներ, մրցույթներ, հետազոտություններ, աճուրդներ, վիճակախաղեր, արշավներ անցկացնելու, ահաբեկչություն քարոզելու, պոռնոգրաֆիկ բնույթի բովանդակություն տարածելու և նմանատիպ այնպիսի գործողություններ կատարելու նպատակով, որոնք ուղղված են շահույթի ստացմանը, գաղափարների կամ գովազդի տարածմանը՝ առանց Օպերատորի նախնական գրավոր համաձայնության,

7.2.5 Ծառայություններից օգտվելիս չխախտել Օպերատորի, այլ Բաժանորդների և երրորդ անձանց իրավունքներն ու շահերը, ՀՀ օրենսդրության, սույն Պայմանների դրույթները, պահանջները, Օպերատորի կողմից սահմանված այլ կարգերն ու կանոնները,

7.2.6 չօգտագործել Ծառայություններն ելքային՝ այդ թվում այլ օպերատորների ցանցերից, Տրաֆիկի փոխանցում իրականացնելու համար, ինչպես նաև այնպիսի նպատակներով, որոնք հակասում են սույն պայմաններին, պետության շահերին, բարոյականության համընդհանուր նորմերին և հասարակական կարգի պահպանման կանոններին,

7.2.7 չիրականացնել գործողություններ, որոնք ուղղված են Օպերատորի Ցանցի նորմալ գործունեության խաթարմանը կամ նպատակ ունեն փոփոխել Օպերատորի Ցանցի կամ սարքավորման կամ ծրագրային ապահովման կարգաբերումները,

7.2.8 տեխնիկական տարբեր լուծումներ կիրառելով (անկախ կիրառվող տեխնոլոգիայից) Շարժական կապի Ծառայությունները չօգտագործել ամրակցված կապի ծառայություններ մատուցելու/ ստանալու համար և հակառակը,

7.2.9 Օպերատորի Ցանցով չփոխանցել տեղեկատվություն կամ չիրականացնել գործողություններ, որոնք կարող են ստեղծել չարդարացված բարձր ծանրաբեռնվածություն Օպերատորի Ցանցում կամ սարքավորումների վրա,

7.2.10 պահպանել ցանկացած տեխնիկական կամ տեղեկատվական ռեսուրսի օգտագործման կանոնները,

7.2.11 չկեղծել սեփական, ինչպես նաև այլ ցանցային արձանագրություններում և ինտերնետում տվյալներ փոխանցելիս օգտագործվող IP հասցեները,

7.2.12 պահպանել տեղեկատվական անվտանգության կանոնները և զգուշանալ զեղծարարությունից։

7.2.13 չիրականացնել ձայնային տրաֆիկի և կարճ հաղորդագրությունների անօրինական ուղղորդում կամ վերջնավորում դեպի օպերատորի ցանց, կամ օպերատորի ցանցի օգտագործմամբ դեպի այլ օպերատորների ցանցեր։

7.3 Բաժանորդն իրավունք ունի՝

7.3.1 Դիմել և Օպերատորի Վաճառքի և սպասարկման կենտրոն(ներ)ից ստանալ դիմելու պահին նախորդող 12 (տասներկու) ամիսների համար ամրակցված հեռախոսակապի ծառայությունների ելքային և շարժական հեռախոսակապի ծառայությունների մուտքային (հնարավորության դեպքում) և ելքային զանգերի, ելքային կարճ հաղորդագրությունների վերաբերյալ (մուտքային կարճ հաղորդագրությունների մասին տեղեկատվություն չի տրամադրվում) տեղեկություններ հաշիվ-ապրանքագրերի ձևով կամ Օպերատորի համար ընդունելի այլ եղանակով, եթե այդ զանգերն ու կարճ հաղորդագրությունները սակագրվել են և Բաժանորդի համար առաջացրել ծառայության վճար։ Օպերատորը կարող է սահմանել վերծանման տրամադրման ավելի երկար ժամանակահատված,

7.3.2 Օպերատորի Վաճառքի և սպասարկման կենտրոններում Ամրակցված ցանցի ծառայությունների մասով, անվճար ստանալ կատարած միջազգային, միջքաղաքային և դեպի հանրային շարժական բջջային կապի ցանցեր ելքային զանգերի վերծանումը՝ մեկ օրինակ յուրաքանչյուր հաշվարկային ժամանակաշրջանի համար։ Այլ դեպքերում Բաժանորդին հաշվի քաղվածք և վերծանում տրամադրելու համար Օպերատորն իրավասու է վճարներ գանձել,

7.3.3 օգտվել Համարի տեղափոխելիության ծառայությունից.

7.3.3.1 Օպերատորի Ցանցից այլ ցանց Համարի տեղափոխումը Բաժանորդին չի ազատում տեղափոխվող Համարի մասով Օպերատորի հանդեպ ունեցած ֆինանսական պարտավորությունների կատարումից,

7.3.3.2 Օպերատորի Ցանցից այլ ցանց Համարի տեղափոխման դեպքում Բաժանորդի համարի հաշվի դրական մնացորդը չի փոխանցվում Ընդունող օպերատորի ցանցում Բաժանորդի հաշվին։ Բաժանորդի դիմումի դեպքում Հետվճարային համակարգում դրական հաշվեկշռի մնացորդը հետ է վերադարձվում անկանխիկ եղանակով։ Առկա բոնուսները և այլ

արտոնությունները զրոյացվում են: Բաժանորդի Համարը Օպերատորի Ցանց կրկին տեղափոխելու (վերադառնալու) դեպքում Օպերատորի Ծառայություններին բաժանորդագրությունը կատարվում է նոր բաժանորդների համար սույն Պայմաններով սահմանված ընդհանուր հիմունքներով:

7.4 Եթե Բաժանորդը դիմել է Օպերատորին հաշիվների/գանձումների հետ անհամաձայնության հայտով, ապա նա տալիս է համաձայնությունը Օպերատորին՝ ուսումնասիրել և մշակել իր կողմից օգտագործված ինտերնետ ռեսուրսների բովանդակությունը, հնարավորության սահմաններում մուտք գործած կայքերի էլեկտրոնային հասցեների մասին տեղեկատվությունը ։

7.5 Բաժանորդի վերջնակետային սարքավորումից վիրուսային ծրագրերի և/կամ սպամի առաքման դեպքում կհամարվի, որ վնասը պատճառվել է Բաժանորդի գործողության կամ անգործության հետևանքով:

7.6 Օպերատորը Բաժանորդի ուղարկած և ստացած կարճ հաղորդագրությունների, ինտերնետ ռեսուրսների բովանդակության, մուտք գործած կայքերի էլեկտրոնային հասցեների մասին տեղեկատվություն տրամադրելու պարտավորություն չունի:

ԲԱԺԻՆ 8

SIM քարտերի, Սարք(եր)ի, Սարքավորումների օգտագործումը և պահպանումը

8.1 Օպերատորի և Բաժանորդի միջև Սարքերի և/կամ Սարքավորումների հանձնում-ընդունումն իրականացվում է համապատասխան ակտով (այսուհետ՝ Հանձնման-ընդունման ակտ), որը հանդիսանում է Բաժանորդային Պայմանագրի անբաժանելի մասը:

8.2 Բացառությամբ սույն Պայմանների 6.12 կետում նախատեսված դեպքի՝ Օպերատորի կողմից տրամադրվող Սարքերը, Օպերատորի կողմից ցանկացած ավելացված (փոփոխված, վերանորոգված) սարքավորումների, ինչպես նաև մալուխների հետ միասին, համարվում են Օպերատորի սեփականությունը, և Բաժանորդը չի կարող դրանք փոփոխության ենթարկել, վճարովի կամ անհատույց փոխանցել (տրամադրել) երրորդ անձի, եթե այլ բան գրավոր ձևով համաձայնեցված չէ Օպերատորի և Բաժանորդի միջև:

8.3 Սարքի սխալ օգտագործման, պատահական կորստի, վնասվածքի կամ հափշտակության ռիսկը փոխանցվում է Բաժանորդին՝ Հանձնման-ընդունման ակտը ստորագրելու պահից, և այդ պահից սկսած Սարքի համար պատասխանատվությունը կրում է Բաժանորդը:

8.4 Սարքի և/կամ Սարքավորումների տեղադրումը, կարգաբերումը տեղափոխումն իրականացվում է Բաժանորդի, իսկ որոշ դեպքերում Օպերատորի կողմից, եթե այլ բան սահմանված չէ Օպերատորի կողմից ։ Մոդեմի կարգավորումների որոշ հրահանգները զետեղված են Օպերատորի կայքում:

8.5 Բաժանորդը պարտավոր է՝

8.5.1 Օպերատորի կողմից տրամադրված սարքավորումը, սարքը և SIM քարտը չօգտագործել անհամատեղելի այլ սարքավորումների հետ համատեղ կամ որևէ այլ կերպ, որը կարող է վնաս հասցնել Օպերատորի և/կամ այլ օպերատորների էլեկտրոնային հաղորդակցության ցանցերին կամ սարքավորումներին կամ ազդել դրանց գործառնության վրա,

8.5.2 Պայմանագիր կնքելու պահից երեք ամիսների ընթացքում ակտիվացնել Բջջային կապի կանխավճարային համակարգի իրեն հատկացված համարը, այն օգտագործել ելքային կամ մուտքային (ձայնային կամ ոչ ձայնային) ծառայությունների, տեղեկատվության ուղարկման/ստացման համար, սակագնային փաթեթով նախատեսված ժամկետներում կատարել կանխավճար (հաշվի լիցքավորում) և այլ կիրառելի վճարներ,

8.5.3 Սարք(եր)ին և/կամ Սարքավորում(ներ)ին վերաբերվել խնամքով, պահպանել այն (դրանք) պատշաճ և սարքին վիճակում,

8.5.4 Սարքը և/կամ Սարքավորումներն օգտագործել միայն այն նպատակով և այն վայրում, որտեղ Օպերատորի մասնագետների կողմից տեղադրվել և կարգաբերվել են, առանց Օպերատորի թույլտվության չտեղափոխել դրանք,

8.5.5 չվերանորոգել Սարքը և/կամ Սարքավորումներն առանց Օպերատորի գրավոր համաձայնության,

8.5.6 Սարքի և/կամ Սարքավորման կորստի, հափշտակության, Բաժանորդի կամ երրորդ անձի կողմից վնասման դեպքում ոչ ուշ, քան 3 (երեք) օրվա ընթացքում տեղեկացնել Օպերատորին (ներկայացնելով Օպերատորի կողմից պահանջվող փաստաթղթերը) համարը արգելափակելու, ծառայությունների մատուցումը դադարեցնելու համար, Օպերատորի պահանջի դեպքում՝ վճարել դրա (դրանց) արժեքը,

8.5.7 Օպերատորի կողմից տրամադրված սարքավորման, Սարքի վերադարձման պահանջ ստանալու պահից դա/դրանք այլևս չօգտագործել և վերադարձնել Օպերատորին,

8.5.8 զերծ մնալ SIM քարտի, Օպերատորի տրամադրած սարքավորման և Սարքի ոչ պատշաճ, անօրինական և չարաշահումներով օգտագործումից և թույլ չտալ դրա օգտագործումը չլիազորված անձանց կողմից,

8.5.9 SIM քարտի կամ սարքի և/կամ սարքավորման կորստի կամ հափշտակության դեպքում այդ մասին անհապաղ տեղեկացնել Օպերատորին՝ իր Ծառայությունները կասեցնելու համար:

8.6 Բաժանորդային Պայմանագրի լուծման (անկախ լուծման պատճառներից) կամ որոշ Ծառայության(ներ)ի մատուցումը դադարեցնելու դեպքում Սարք(եր)ը և/կամ Սարքավորումները սարքին վիճակում վերադարձնել Օպերատորին կամ Օպերատորի մասնագետների համար Սարք(եր)ն ապամոնտաժելու հնարավորություն ստեղծել:

8.7 Սույն Պայմանների 8.6 կետում նշված Սարք(եր)ը չվերադարձնելու դեպքում՝ վճարել Օպերատորի կողմից սահմանված Սարքի և/կամ Սարքավորումների արժեքը (փոխհատուցման գումար):

8.8 Օպերատորը պարտավորվում է երաշխիքային ժամկետի ընթացքում իր համար հնարավոր ամենակարճ ժամկետում Բաժանորդին տրամադրված Սարքն անվճար փոխարինել նորով, եթե Օպերատորի կողմից այն ճանաչվել է արտադրական թերություն ունեցող: Մնացած դեպքերում Օպերատորը կարող է SIM քարտի փոխարինման համար Բաժանորդից հավելյալ վճար գանձել:

8.9 Շարժական կապի Ծառայություններից օգտվելու համար անհրաժեշտ սարքավորումը (բջջային հեռախոսը) ձեռք է բերվում Բաժանորդի կողմից՝ իր հաշվին և հայեցողությամբ, և Բաժանորդն է պատասխանատու դրա կարգաբերումների և պատշաճ աշխատանքի համար:

8.10 Օպերատորը սարքավորումները կարող է առաջարկել օգտագործման պայմանով, իրավունքով կամ այլ հիմունքներով: Որոշ Ծառայությունների դեպքում Օպերատորը կարող է Սարքավորումներ առաջարկել նաև հատուկ պայմաններով, այդ թվում՝ որոշակի ժամկետով Օպերատորի Բաժանորդ մնալու կամ Օպերատորի կողմից սահմանված այլ պարտավորությամբ:

8.11 Եթե Սարքը և/կամ Սարքավորումը Բաժանորդին տրված է օգտագործման իրավունքով, Բաժանորդը իրավասու չէ զիջել, վաճառել, վարձակալության տալ կամ որևէ այլ կերպ փոխանցել այլ անձի կամ որևէ փոփոխություն կատարել դրանում, ինչպես նաև Սարքի և/կամ Սարքավորման վնասման, կորստի կամ հափշտակության դեպքում պարտավոր է սահմանված կարգով և ժամկետում Օպերատորին վճարել դրա արժեքը:

8.12 Օպերատորը հանդիսանում է բաժանորդին տրամադրվող SIM քարտի միակ սեփականատերը՝ բացառությամբ դրա վրա գտնվող Բաժանորդի սեփականությունը հանդիսացող տեղեկատվության:

8.13 SIM քարտը Բաժանորդին հանձնելու պահից դրա վնասման, կորստի, հափշտակության և ոչ լիազորված օգտագործման ռիսկերը կրում է բաժանորդը:

8.14 Բաժանորդը իրավասու չէ զիջել, վաճառել, վարձակալության տալ կամ այլ կերպ երրորդ անձի փոխանցել, վնասել կամ ոչնչացնել SIM քարտը:

8.15 SIM քարտի վրա գրանցված նույնականացնող տեխնիկական տվյալները կրկնօրինակելու ցանկացած փորձ արգելվում է և բաժանորդն է դրա համար պատասխանատվություն կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

8.16 Տեխնիկական վերազինման անհրաժեշտությամբ պայմանավորված Օպերատորն իրավունք ունի փոխելու ամրակցված ցանցի համարը, և/կամ սխալ տրամադրված բջջային ցանցի համարը՝ այդ մասին նախապես ծանուցելով բաժանորդին:

8.17 Օպերատորն իրավասու է բաժանորդի նախաձեռնությամբ Պայմանագրի լուծման պահից, իսկ այլ հիմքով պայմանագրի լուծման դեպքում ՀՀ օրենսդրությամբ սահմանված ժամկետում տրամադրված բջջային և ամրակցված կապի համարները տրամադրել այլ անձի:

ԲԱԺԻՆ 9

Սակագներ, գանձումներ

9.1 Օպերատորն ինքն է սահմանում և իրավասու է սույն Պայմանների 18.5 կետին համապատասխան միակողմանի կարգով փոփոխել Ծառայությունների, Ծառայությունների/Սակագնային փաթեթների սակագները: Կարգավորվող որոշ ծառայությունների սակագների փոփոխություններն իրականացվում են Հանձնաժողովի ընդունած որոշումներին համապատասխան:

9.2 Մատուցված Ծառայությունների համար գանձվող գումարների և մատուցված Ծառայությունների ծավալների հաշվարկման և գանձումների համար հիմք են ընդունվում Օպերատորի Բիլինգային Համակարգի կամ այլ օպերատորների և ծառայություն մատուցողների համակարգերում գրանցված և ներկայացված տվյալները (օրինակ՝ ռոումինգում Ծառայություններ մատուցում) :

9.3 Հեռախոսակապի ծառայությունների դիմաց գանձումն իրականացվում է Ծառայությունների/ Սակագնային Փաթեթին կամ Առաջարկի նկարագրին համապատասխան ամսավճարի/ օրավճարի (ոչ լրիվ ամսվա դեպքում համամասնորեն) չափով և/կամ ելնելով հեռախոսային զանգի տևողությունից, Բաժանորդի կատարված հարցումների քանակից, ակտիվացված և/կամ օգտագործված Ծառայությունների քանակից, ընդունված, փոխանցված, ուղարկված, մշակված և/կամ պահպանված տեղեկատվության քանակից և/կամ ծավալից՝ ըստ սակագրման միավորի, ինչպես նաև ՀՀ օրենսդրությամբ և/կամ Օպերատորի կողմից սահմանված այլ չափանիշներով:

9.4 Օպերատորն իրավասու է Բաժանորդից գանձել վճարներ (տուգանք) Ծառայությունների սահմանափակված ժամանակահատվածի կամ կասեցված Ծառայությունների վերականգնման, ապամոնտաժված մալուխներն ու Սարքերը և/կամ Սարքավորումները նորից մոնտաժելու կամ փոխարինելու կամ SIM քարտի փոխարինման համար:

9.5 Զանգի տևողության հաշվարկն իրականացվում է կանչվող կողմի պատասխանի ազդանշանից մինչև զանգող կամ կանչվող անձի կողմից անջատումը /անջատման ազդանշանի ստացումը/ կամ Բաժանորդի կամ կանչվող կողմի սարքավորման անջատվելը, եթե այլ բան չի սահմանվում Օպերատորի կողմից որոշ Ծառայությունների համար:

9.6 Զանգը համարվում է պատասխանված, իսկ զանգի տևողության հաշվարկը և համապատասխան գանձումներն իրականացվում են նաև հետևյալ սարքավորումների պատասխանի/ազդանշանի դեպքերում՝

9.6.1 տվյալների փոխանցման սարքավորման (օրինակ՝ մոդեմ, ֆաքսիմիլային ապարատ և այլ սարքավորում, որոնք աշխատում են տեղեկատվության ավտոմատ ընդունման ռեժիմում), կամ Բաժանորդի այլ սարքավորման, որն ապահովում կամ նմանարկում է տվյալների փոխանցման հնարավորություն կանչվող անձի բացակայության դեպքում,

9.6.2 Բաժանորդի սարքավորման, ինքնապատասխանիչի, ձայնային փոստի կամ Բաժանորդային Պայմանագրով սահմանված այլ կարգով:

9.7 Հաշվի առնելով Ցանցի աշխատանքի տեխնիկական առանձնահատկությունները՝ Օպերատորն իրավունք ունի սահմանել մեկ չընդհատվող կամ ակտիվացված, սակայն չօգտագործվող կապի

սեանսի՝ հեռախոսազանգի, վիդեոզանգի, ինտերնետ սեսիայի (և այլն) առավելագույն տևողություն:

9.8 Եթե Բաժանորդն օգտվում է այնպիսի Ծառայությունից (ռոումինգ ծառայություն, միջազգային ելքային ծառայություններ և այլն), որի դիմաց հաշվարկված վճարը նշված պահի դրությամբ (տեխնիկական կամ մի շարք այլ առանձնահատկություններով պայմանավորված) հասանելի չէ Օպերատորի Բիլինգային Համակարգում, ապա այդ Ծառայության համար հաշիվը Բաժանորդին է ներկայացվում այն Բիլինգային Համակարգում հասանելի դառնալու (հաշվարկվելու) պահից, և Բաժանորդը պարտավոր է վճարել մատուցված ծառայության համար (անգամ, եթե Բաժանորդային Պայմանագիրն արդեն լուծվել է):

9.9 Բաժանորդային Պայմանագրի համաձայն տրամադրված Սարքի և/կամ Սարքավորման կորստի, հափշտակության կամ ցանկացած այլ պատճառներով (ոչ Օպերատորի գործողությունների հետևանքով) վնասման դեպքում նոր Սարքի տրամադրումը հնարավոր է Բաժանորդի կողմից Սարքի դիմաց Օպերատորին փոխհատուցելուց հետո:

9.10 Բաժանորդային Պայմանագրի համաձայն տրամադրված Սարքի և/կամ Սարքավորման կորստի, հափշտակության կամ ցանկացած այլ պատճառներով (ոչ Օպերատորի գործողությունների հետևանքով) վնասման դեպքում նոր Սարքի տրամադրումը հնարավոր է Բաժանորդի կողմից Սարքի դիմաց Օպերատորին փոխհատուցելուց հետո, բայց ոչ ուշ քան Օպերատորի կողմից նման պահանջ ներկայացնելու պահից 10 (տասը) օրվա ընթացքում:

9.11 Օպերատորն իրավասու է՝

9.11.1 պահանջել վճար Ծառայությունների պատշաճ մատուցմանը խոչընդոտող անսարքությունները և թերությունները շտկելու (այդ թվում՝ փոխված մալուխների, սարքավորումների) համար, եթե դրանք առաջացել են Բաժանորդի գործողությունների և/կամ անգործության պատճառով,

9.11.2 հավելյալ (լրացուցիչ) ծառայություններ մատուցելու համար գանձել վճար,

9.11.3 Օպերատորի Ցանցին միացնելու նպատակով Բաժանորդի Տարածքում մալուխների մոնտաժման աշխատանքներ կատարելու համար Բաժանորդից պահանջելու միացման վճար (օրինակ՝ Օպերատորի մասնագետների կողմից օգտագործված մալուխների (նյութերի) քանակը և կատարված աշխատանքների ծավալը գերազանցում են Օպերատորի կողմից նման աշխատանքների համար սահմանված նորմերը), եթե դա նախօրոք համաձայնեցվել է Բաժանորդի հետ:

9.12 Օպերատորն իր իրավասությունների շրջանակում կարող է սահմանել և հրապարակել մատուցված Ծառայությունների արժեքների հաշվարկի և գանձում իրականացնելու այլ կարգեր ու պայմաններ:

ԲԱԺԻՆ 10

Վճարման կարգն ու պայմանները

10.1. Ծառայությունների համար վճարումները որպես կանոն (եթե այլ բան սահմանված չէ Օպերատորի կողմից) սահմանվում և հաշվարկվում են ամսական կտրվածքով:

10.2 Ծառայությունները՝ ըստ բաժանորդագրման տեսակի, մատուցվում է կանխավճարային և հետվճարային համակարգերով:

10.3 Բաժանորդը վճարումները, հաշվի լիցքավորումը կարող է իրականացնել կանխիկ, բանկային փոխանցման, տերմինալների, բանկային վճարային քարտերի, առցանց, բջջային հավելվածների և/կամ Օպերատորի կողմից ընդունելի այլ միջոցներով:

10.4 Կանխավճարային համակարգի դեպքում՝ վճարումն իրականացվում է Բաժանորդի Հաշվեկշռին առկա դրամական միջոցների նվազեցման եղանակով: Բաժանորդն իրավունք ունի օգտվել Ծառայություններից իր Հաշվեկշռի և Օպերատորի կողմից սահմանված ժամկետի սահմաններում:

10.5 Կորպորատիվ բաժանորդների վճարումները կատարվում են միայն անկանխիկ (փոխանցում) եղանակով:

10.6 Օպերատորի կողմից բիլինգային համակարգերում գրանցված տվյալների համաձայն ձևավորված և ներկայացված հաշիվը (Հաշվից քաղվածքը) դիտարկվում է որպես մատուցված Ծառայությունների և դրանց ծավալի ապացույց:

10.7 Հետվճարային համակարգի ծառայությունների դեպքերում յուրաքանչյուր հաշվետու ամսվա հաշիվը պատրաստվում և Բաժանորդին է ներկայացվում հաշվետու ամսվա Բիլինգի օրվանից մինչև 10 (տասը) օրվա ժամկետում, եթե այլ բան չի սահմանվում Օպերատորի կողմից:

10.8 Բաժանորդի ընտրությամբ հաշիվը կարող է ուղարկվել էլեկտրոնային փոստով կամ դիմումի հիման վրա փոստային առաքման (վճարովի) ծառայության միջոցով: Օպերատորն իրավունք ունի փոստային առաքումների, ինչպես նաև Բաժանորդի հաշվի կրկնօրինակը տրամադրելու համար Բաժանորդից գանձել վճար:

10.9 Հետվճարային համակարգի Բաժանորդը պարտավոր է մատուցված Ծառայությունների դիմաց վճարումը կատարել հաշվում նշված ժամկետից ոչ ուշ, եթե այլ բան սահմանված չէ Ծառայությունների/Սակագնային փաթեթի նկարագրությամբ կամ Օպերատորի կողմից:

10.10 Վճարումը համարվում է կատարված Օպերատորի Բիլինգային Համակարգ գումարը մուտքագրելու պահից:

10.11 Մատուցվող Հեռահաղորդակցության ցանկացած Ծառայության համար վճարումը մասամբ կամ ամբողջությամբ չկատարելու, ուշացնելու կամ Օպերատորի նկատմամբ այլ չկատարված ֆինանսական պարտավորությունների դեպքում Օպերատորն իրավունք ունի նվազեցնել/գանձել պարտքի գումարը Բաժանորդի գրավադրված դրամական միջոցներից կամ բանկային երաշխիքից և/կամ կանխավճարի գումարից և/կամ բռնագանձում տարածել գրավի առարկայի վրա, եթե այդպիսիք կան:

10.12 Բաժանորդային վճարի չափը կարող է լինել հաստատուն (կայուն) գումար կամ կախված լինել Հիմնական պայմանագրի ներքո ակտիվացված և մատուցվող Ծառայությունների, հեռախոսագծերի կամ համարների քանակից:

10.13 Բաժանորդային վճարը (ամսավճարը) ենթակա է հաշվարկման և գանձման Ծառայության ակտիվացման պահից մինչև Ծառայության ամբողջական կասեցումը՝ անկախ ծառայությունից օգտվելու հանգամանքից, եթե այլ բան չի սահմանվում Օպերատորի կողմից:

10.14 Հետվճարային համակարգի պայմանագրի լուծման դեպքում, եթե Բաժանորդի նախընտրած Ծառայությունների/Սակագնային փաթեթը ունեցել է ներառումներ, ապա բաժանորդային վարձի վերջնահաշվարկը և գանձումը կկատարվի Բաժանորդի Ծառայությունների/Սակագնային փաթեթի ներառումների օգտագործված օրերի քանակին համապատասխան: Այն դեպքում, եթե օգտագործված ներառումների ծավալը գերազանցում է օրերի քանակին համապատասխան ծավալը՝ վճարումը հաշվարկվում է օգտագործմանը համապատասխան:

10.15 Բաժանորդը պարտավոր է վճարել բաժանորդային վարձը նաև այն դեպքում, երբ որևէ պատճառով Ծառայությունից չի օգտվել (եթե Բաժանորդային Պայմանագիրը սահմանված կարգով չի լուծվել):

10.16 Բաժանորդը սույնով ընդունում և համաձայնում է, որ Օպերատորն իրավասու է իր կողմից սահմանված կարգով՝ առանց որևէ ծանուցման, զրոյացնել Բաժանորդի Հաշվեկշիռը՝ այն Բաժանորդի կողմից սահմանված ժամկետում չսպառելու դեպքում:

10.17 Օպերատորն իրավասու է իր հայեցողությամբ սահմանել Ծառայություններից օգտվելու գումարային սահմանաչափ (առավելագույն բացասական Հաշվեկշիռ) և օգտագործման վերաբերյալ այլ սահմանափակումներ, որոնց սահմաններում Բաժանորդը կարող է օգտվել Ծառայություններից:

10.18 Օպերատորը կարող է փոփոխել Սահմանաչափի սահմանման մոտեցումները

10.19 Բաժանորդի կողմից Օպերատորի սահմանած գումարային սահմանաչափին հասնելու դեպքում Օպերատորն իրավասու է սահմանափակել կամ կասեցնել Ծառայությունների մատուցումը :

10.20 Բաժանորդի դիմումի հիմքով Օպերատորը կարող է սահմանել ծառայությունների սահմանաչափ/լիմիտ, որի գումարը կարող է գերազանցվել Սույն Պայմանների 6.22 կետի հիմքով:

10.21 Բիլինգային Համակարգի խափանումների և Պահպանման աշխատանքների իրականացման ընթացքում Կանխավճարային համակարգի Բաժանորդները կարող են ծախսել ավելին, քան իրենց փաստացի Հաշվեկշիռն է: Նման դեպքերում Հաշիվը ստուգելիս Հաշվեկշռի վերջին թարմացումները Բաժանորդներին կարող են հասանելի չլինել, ինչը հիմք չէ օգտագործած Ծառայությունների դիմաց հաշվարկված գումարը չվճարելու համար:

10.22 Եթե Բաժանորդը արդեն ունի առնվազն 1 (մեկ) ամսվա ժամկետանց պարտք, ապա մատուցվող Ծառայությունը կրկին ակտիվացնելու և Ծառայություններից օգտվելու համար

պարտավոր է ամբողջությամբ վճարել պարտքը և ընթացիկ ամսվա ամսավճարը (եթե այն սահմանված է):

10.23 Հետվճարային համակարգում վճարովի Ծառայություններ ակտիվացնելու դեպքում գանձումը կատարվում է այդ համակարգի նույն կանոններով կամ Բաժանորդի կողմից կատարված կանխավճարից, եթե այլ բան սահմանված չէ Օպերատորի կողմից:

10.24 Եթե Հիմնական պայմանագրի ներքո կնքվել են մի քանի Պայմանագրեր կամ նույն Պայմանագրով տրամադրվել են մի քանի հաշիվներ կամ համարներ, Օպերատորն իրավունք ունի առանց Բաժանորդին նախօրոք տեղեկացնելու, հաշվանցել կամ ուղարկել մեկ Բաժանորդային Պայմանագրի, Հաշվի կամ Համարի համար ստացված և չօգտագործված դրամական միջոցները Բաժանորդի մեկ այլ Բաժանորդային Պայմանագրով, Հաշվով կամ Համարով գոյացած պարտքը մարելու համար: Բաժանորդի Հաշվին պահպանվում է այն գումարը, որը մնացել է պարտքերի ամբողջական մարումից հետո:

10.25 Բաժանորդը՝ ցանկացած դեպքում պարտավոր է հաշվարկային ժամանակաշրջանի պարտքը անձամբ ճշտել և պատասխանատվություն է կրում այն ժամանակին վճարելու համար՝ անկախ վճարման միջոցից, հաշիվը ստանալու կամ ներկայացված հաշվի վերաբերյալ որևէ առարկություն ունենալու փաստից՝ (այս դեպքում վճարման ենթակա է չվիճարկվող մասը): Հաշվի չստանալը կամ ուշացումով ստանալը չի կարող հիմք հանդիսանալ վճարումները չկատարելու համար:

10.26 Բաժանորդը կարող է վիճարկել կամ առարկություններ ներկայացնել Օպերատորի կողմից ներկայացված հաշվի վերաբերյալ մինչև տվյալ հաշվի համար սահմանված վճարման վերջնաժամկետը, հակառակ դեպքում ներկայացված հաշվում նշված (հաշվարկված) պարտքը (հաշվարկված վճարը) համարվում է Բաժանորդի կողմից անվերապահորեն ընդունված:

10.27 Հաշվի չվճարումը չի համարվում առարկության ներկայացում դրա վերաբերյալ:

10.28 Հաշվի, մատուցված ծառայությունների որակի վերաբերյալ Բաժանորդի առարկությունները, դիմում-բողոքները կարող են ներկայացվել գրավոր (թղթային), էլեկտրոնային փոստի, ինչպես նաև Կոնտակտային կենտրոն հեռախոսազանգի կամ Վաճառքի և սպասարկման կենտրոն այցելության միջոցով: Առանձին դեպքերում՝ կոնտակտային կենտրոն հեռախոսազանգի միջոցով ներկայացված և անմիջապես լուծում չստացած հարցերի հիմքով բացվում է հայտ, որը քննարկվում է դիմում-բողոքների համար սահմանված ընդհանուր ժամկետներում: Մատուցված Ծառայությունների որակի անկման, ծառայությունների ընդհատման (ներառյալ՝ խափանման կամ անսարքության) վերաբերյալ բաժանորդների բողոքներին արձագանքման ժամանակահատված է սահմանվում 15 աշխատանքային օրը, իսկ լրացուցիչ ուսումնասիրության պահանջի դեպքում դիմում-բողոքին ընթացք է տրվում այն մուտքագրելու, հայտը բացելու հաջորդ օրվանից առավելագույնը երեսնօրյա ժամկետում, որի մասին բաժանորդը նախօրոք (տասնհինգ օրյա ժամկետում) տեղեկացվում է գրավոր կամ էլ. փոստով կամ կարճ հաղորդագրությամբ կամ կողմերի համար այլ ընդունելի եղանակով:

10.29 Վճարումները սահմանված ժամկետում չկատարելու դեպքում Օպերատորն իրավունք ունի ՀՀ օրենսդրության շրջանակներում ուշացրած յուրաքանչյուր օրվա համար հաշվարկել տուգանք վճարման ենթակա գումարի 0.1 (զրո ամբողջ մեկ տասնորդական) տոկոսի չափով եթե այլ բան սահմանված չէ Օպերատորի կողմից:

10.30 Վճարում կատարելիս Բաժանորդը պետք է ճշգրիտ նշի այն հեռախոսահամարը, և/կամ Հաշվի համարը և/կամ պայմանագրի համարը, որի համար այն կատարվում է:

10.31 Բաժանորդի փոխարեն վճարում կատարող ցանկացած անձ (վճարումներ կատարելու մասով), համարվում է Բաժանորդի կողմից պատշաճ կերպով լիազորված և վերջինիս անունից գործող:

10.32 Սույնով Բաժանորդը անվերապահորեն տալիս է իր համաձայնությունը Օպերատորին ուղղումներ կատարելու սխալ վճարումներում, ներառյալ՝ իրականացնել սխալ վճարման փոխանցում Բաժանորդի Հաշվից ճիշտ հասցեատիրոջը:

10.33 Բաժանորդի կողմից սխալ հաշվին (ցանցի ներսում) կատարված ցանկացած վճարում կարող է Օպերատորի կողմից ուղղվել ողջամիտ հնարավորությունների շրջանակում: Օպերատորը պատասխանատվություն չի կրում Բաժանորդի կրած վնասների համար:

10.34 Սխալ փոխանցված գումարը հետ է վերադարձվում Բաժանորդի հաշվին այն դեպքում, երբ անձը, ում Հաշվին սխալմամբ փոխանցվել է գումարը, այն չի օգտագործել կամ նրա Հաշվեկշռին առկա է համապատասխան չափով գումար

10.35 Հետվճարային համակարգի Բաժանորդի հաշվին արտերկրից վճարում կատարվելու (նաև սխալ փոխանցված գումարի) դեպքում Բաժանորդային Պայմանագրի լուծման կամ այլ դեպքերում Օպերատորն իրավունք ունի Բաժանորդին կամ գումարը փոխանցած անձին չվերադարձնել Բաժանորդի հաշվին առկա գումարն ամբողջությամբ կամ արտերկրից ստացված վճարումների ողջ գումարի չափով, եթե Օպերատորն այդ փոխանցման մեջ կգտնի օրենսդրությամբ արգելված գործողություն:

10.36 **Կորպորատիվ Բաժանորդներ.**

10. 36. 1 Կորպորատիվ Բաժանորդներին հետվճարային կամ կանխավճարային համակարգերով Ծառայությունները կարող են մատուցվել սույն Պայմաններից տարբերվող այլ պայմաններով :

Մատուցված Ծառայությունների դիմաց Կորպորատիվ Բաժանորդները վճարումները կատարում են ոչ ուշ քան հաշվում նշված ժամկետում և միայն անկանխիկ եղանակով:

10. 36. 2 Կորպորատիվ Բաժանորդի կողմից հաշիվների վճարման ժամկետների խախտման դեպքում Օպերատորն իրավունք ունի դադարեցնելու ծառայությունների մատուցումը Կորպորատիվ Բաժանորդի բոլոր հեռախոսահամարներով:

10. 36. 3 Կորպորատիվ Բաժանորդը Օպերատորի առջև պատասխանատվություն է կրում իր աշխատակիցների համար այն դեպքում, երբ այդ աշխատակիցներն օգտվում են Ծառայություններից

Բաժանորդի կորպորատիվ Սակագնային Փաթեթի ներքո, եթե այլ բան սահմանված չէ Օպերատորի կողմից:

10. 36. 4 Կորպորատիվ Բաժանորդի Օգտատերը պատասխանատվություն չի կրում Կորպորատիվ Բաժանորդին մատուցված բջջային կապի ծառայությունների վճարման համար առանձին:

10.36.5 Վճարման պարտավորությունները Օգտատիրոջը վերաբերվում է միայն այն ծառայությունների դեպքում, երբ Կորպորատիվ Բաժանորդի կողմից տրամադրված սահմանաչափը գերազանցված է լինում և Օգտատերն իր անձնական միջոցներով պարտավոր է վճարումներ կատարել սահմանաչափի գումարային շեմից ավել օգտագործված ծառայությունների հաշիվները:

10. 37 Բաժանորդը սույնով ընդունում և համաձայնում է, որ սահմանված վավերականության ժամկետում Հաշվեկշիռը չսպառելու դեպքում Օպերատորն իրավասու է իր կողմից սահմանված կարգով առանց որևէ ծանուցման զրոյացնել Բաժանորդի հաշվեկշիռը:

10. 38 Սույնով Բաժանորդը տեղեկացվում է, որ Օպերատորի հաշիվները սահմանված ժամկետներում չվճարվելու դեպքում, դրանք դատական կարգով հավաքագրելու նպատակով Օպերատորն իրավունք է ձեռք բերում միաժամանակ իր հայեցողությամբ հաշվարկելու ստորև ներկայացված բանաձևով տուգանք, որը Բաժանորդը պարտավոր է վճարել Օպերատորի առաջին իսկ պահանջով

Տ = Պմ x Տբ + Պմ x Տբ x Գու

Որտեղ՝

Տ – սույն կետին համապատասխան հաշվարկված տուգանքի տոկոսադրույքն է

Պմ – Բաժանորդի պարտքի հիմնական (մայր) գումարն է,

Տբ – սույն կետով նախատեսված տուգանքի բազային տոկոսադրույքն է, որը կազմում է 21%

Գու – ուղղիչ գործակիցն է, որն իրենից ներկայացնում է՝ սույն կետով նախատեսվածից բացի՝ Բաժանորդի նկատմամբ հաշվարկված մյուս բոլոր տուգանքների հանրագումարի (բաժանելի) և Բաժանորդի պարտքի հիմնական (մայր) գումարի (բաժանարար) քանորդը:

ԲԱԺԻՆ 11

Կասեցում, սահմանափակում

11.1 Օպերատորն իրավունք ունի սահմանափակելու կամ կասեցնելու մատուցվող Ծառայություն (ներ)ը, Ինտերնետ ծառայության արագությունը, եթե Բաժանորդը՝

11.1.1 օգտագործում է չսերտիֆիկացված սարքավորում,

11.1.2 հանրային էլեկտրոնային հաղորդակցության ցանցին միացրել է այնպիսի սարքավորումներ, որոնք համատեղելի չեն կամ ներազդում են հանրային էլեկտրոնային հաղորդակցության ցանցի աշխատանքին կամ հանրային էլեկտրոնային հաղորդակցության ծառայություններից օգտվելու ուրիշների հնարավորության վրա,

11.1.3 անպատշաճ, անօրինական, կամ ոչ նպատակային է օգտագործում Ծառայությունները,

11.1.4 թույլ է տրվել Բաժանորդային Պայմանագրի որևէ պայմանի խախտում,

11.1.5 ժամանակին և/կամ ամբողջությամբ չի կատարել մատուցված Ծառայությունների դիմաց վճարում կամ Հաշվի լիցքավորում, ներառյալ կիրառվող տուգանքները, հրաժարագինը և Բաժանորդային Պայմանագրով սահմանված այլ գումարները,

11.1.6 հատկացված Բջջային կապի կանխավճարային համակարգի համարին երեք ամիս և ավելի ժամկետում վճարում, հաշվի լիցքավորում չի կատարել, համարը չի օգտագործել ելքային կամ մուտքային (ձայնային կամ ոչ ձայնային) ծառայությունների ստացման/ուղարկման, կարճ հաղորդագրության ուղարկման ծառայությունների համար,

11.1.7 Ծառայություններին բաժանորդագրվելիս ներկայացրել է ոչ ճիշտ կամ ոչ ամբողջական տեղեկություն կամ փաստաթղթեր, կամ այլ կերպ չեն բավարարվել բաժանորդագրման պայմանները,

11.1.8 Օպերատորի կողմից Սույն Պայմանների 7.2.2 կետում նշված գործողությունները կատարելուց զերծ մնալու վերաբերյալ զգուշացում ստանալուց հետո կրկին կատարվել են այդ գործողություններից որևէ մեկը,

11.1.9 Տրամադրված հեռախոսահամարին գեներացվում է կասկածելի բնույթի Տրաֆիկ (վիրուսային ծրագրերի կամ սպամի տարածման փորձի փաստեր կամ դրա վերաբերյալ հիմնավոր կասկածներ և այլն), համարն օգտագործվում է օպերատորի ցանցի օգտագործմամբ անօրինական տրաֆիկի ուղղորդման կամ դեպի օպերատորի ցանց տրաֆիկի վերջնավորման նպատակով կամ որևէ կերպով փորձ է կատարվում գեներացնելու եկամուտներ Օպերատորի տեխնիկական հնարավորություններն օգտագործելու միջոցով՝ առանց վերջինիս համաձայնության

11.1.10 Օպերատորի կողմից իրականացվում են Ցանցի պահպանման, վերանորոգման և/կամ վերազինման աշխատանքներ

11.1.11 Սույն Պայմանների 11.1.1. 11.1.2, 11.1.6, 11.1.8, և 11.1.9 կետերով նախատեսված դեպքերում Օպերատորն իրավունք ունի սահմանափակելու կամ կասեցնելու մատուցվող Ծառայություն(ներ)ը առանց նախապես Բաժանորդին տեղեկացնելու:

11.2 Ծառայության սահմանափակման կամ կասեցման դեպքում Օպերատորն իրավունք ունի՝

11.2.1 մասնակի կամ ամբողջությամբ ապակտիվացնել Ծառայությունը (մուտքային, ելքային զանգերը), սահմանափակել ինտերնետ հասանելիության արագությունը,

11.2.2 ապամոնտաժել իր մալուխներն ու Սարքերը/ Սարքավորումները,

11.2.3 պահանջել վճարներ սահմանափակված կամ կասեցված որոշ Ծառայությունների համար, որոնք Բաժանորդը չի ցանկանում կասեցնել, այդ թվում՝ Բաժանորդի համար հատկացված գերարագ ինտերնետի ծավալի պահպանման համար՝ ըստ Առաջարկի Նկարագրի և Սակագնային Փաթեթի:

11.3 Առանձին դեպքերում կասեցման կամ սահմանափակման կարգն ու ժամկետները կարող են պայմանավորված լինել Ծառայությունների/Սակագնային փաթեթի, Առաջարկի նկարագրով և պայմաններով:

11.4 Սահմանափակման կամ Կասեցման հիմքերը վերանալուց կամ ժամկետը լրանալուց հետո իրականացվում է Ծառայության վերակտիվացում՝ առանց նախապես ծանուցման:

11.5 Սահմանափակումը կամ Կասեցումը կարող է վերացվել Օպերատորի նկատմամբ ունեցած բոլոր պարտքերը, տուգանքները և Բաժանորդային Պայմանագրով սահմանված այլ գումարները, ինչպես նաև այդ վճարումները հավաքագրելու հետ կապված Օպերատորի կողմից կրած բոլոր ծախսերը Բաժանորդի կողմից վճարելու դեպքում, եթե այլ բան չի սահմանվում Օպերատորի կողմից:

11.6 Ծառայության սահմանափակումը Բաժանորդին չի ազատում հաշվետու ամսվա վճարը և մատուցված լրացուցիչ ծառայությունների դիմաց կուտակված այլ պարտքերը վճարելու պարտականությունից:

11.7 Սահմանափակման կամ Կասեցման ընթացքում չկատարված պարտավորությունները ենթակա են կատարման՝ Բաժանորդային Պայմանագրով սահմանված կարգով և ժամկետներում:

11.8 Եթե Բաժանորդը հանդիսանում է մեկից ավելի Հաշվի կամ Ծառայության օգտագործող, և որևէ Ծառայության մասով Օպերատորի նկատմամբ ունի պարտք, Օպերատորն իրավունք ունի սահմանափակել կամ կասեցնել մատուցվող բոլոր Ծառայությունները (Համարները) մինչև պարտքերի ամբողջական մարումը:

11.9 Անվտանգության նկատառումներից ելնելով՝ Օպերատորն իրավասու է սահմանափակել կամ կասեցնել Ծառայության մատուցումը՝ այդ մասին նախապես տեղեկացնելով Բաժանորդին, կամ խնդրել ժամանակավորապես դադարեցնել Ծառայությունից օգտվելը: Պահանջի չկատարման արդյունքում ծագած ռիսկերի պատասխանատվությունը կրում է Բաժանորդը÷

11.10 Օպերատորն իրավունք ունի սահմանափակել կամ կասեցնել դեպի Հաճախորդների սպասարկման տնօրինության Կոնտակտային կենտրոն Բաժանորդի կողմից կատարվող զանգը, եթե՝

11.10.1 Բաժանորդի կողմից ընկերության աշխատակցի նկատմամբ, անկախ աշխատակցին դիմելու կամ վերջինիս հետ այլ ցանկացած եղանակով հաղորդակցվելու նպատակից, պարբերաբար թույլ է տրվել անհարգալից կամ բարոյական նորմերի նկատմամբ բացահայտ արհամարական վերաբերմունք կամ ցուցաբերվել է վարքագիծ, որը դրսևորվել է աշխատակցին վիրավորելով կամ ստորացնելով կամ հայհոյելով կամ անպարկեշտ արտահայտություններ անելով կամ որևէ այլ եղանակով աշխատակցի կամ Օպերատորի պատիվն, արժանապատվությունը կամ գործարար համբավն արատավորելով կամ որևէ եղանակով խախտվել կամ խոչընդոտվել է աշխատանքային բնականոն ռեժիմը,

11.10.2 Ընկերության կողմից սպասարկման որակի բարելավման նկատառումներից ելնելով կատարված հեռախոսազանգի ձայնագրությունը, էլ նամակով, սոցիալական կայքերով, ինչպես նաև Օպերատորի պաշտոնական կայքում, My Team հավելածում, գրավոր սպասարկման համար նախատեսված հարթակների հաղորդագրությունները կարող են համարվել հիմք Բաժանորդի կողմից դեպի Օպերատորի Կոնտակտային կենտրոն զանգերի և այլ հաղորդակցման միջոցների սահմանափակման, կասեցման համար կամ հետագայում՝ անհրաժեշտության դեպքում, ներկայացվել կամ օգտագործվել որպես Բաժանորդի վարքագծի ապացույց իրավասու մարմիններում :

11.11 Բաժանորդն իրավունք ունի `

11.11.1 կասեցնել ամրակցված ցանցով մատուցվող Ծառայությունները մեկ ամսից մինչև մեկ տարի ժամկետով՝ գրավոր ծանուցելով նմանօրինակ կասեցման մասին առնվազն տասն օր առաջ և կատարելով ծառայությունների կասեցման առնչությամբ Պայմանագրով նախատեսված մյուս բոլոր պարտավորությունները:

11.11.2 ժամանակավոր կասեցնել իրեն մատուցվող այլ ծառայությունները ոչ ավելի քան երկամսյա ժամկետով: Համապատասխան դիմումը ներկայացնելուց հետո Բաժանորդը պարտավոր է ամբողջությամբ վճարել Օպերատորի կողմից սահմանված վճարը, մարել առկա պարտքը:

11.11.3 Տարին մեկ անգամ `առավելագույնը 60 (վաթսուն) օր ժամկետով, կասեցնել Ծառայությունների փաթեթով մատուցվող ծառայությունները (այսուհետ նաև FMC): Կասեցման ընթացքում FMC փաթեթում ներառված ծառայությունների մատուցումը դադարեցվում է, բացառությամբ բջջային բաղադրիչի, որի համար բաժանորդը պարտավոր է վճարել բջջային կապի ծառայությունների համար Ընկերության համապատասխան հրամանով սահմանված սակագինը: Կասեցման դիմում ներկայացնելու դեպքում Բաժանորդը պարտավոր է ամբողջությամբ մարել դիմումի ներկայացման օրվա դրությամբ FMC փաթեթի առկա պարտքը:

11.11.4 Կասեցման ժամկետի ավարտից հետո ծառայությունները վերականգնվում են ինքնաշխատ եղանակով՝ նույն պայմաններով և սակագնով:

11.12 Այն դեպքում երբ Բաժանորդի հետ կնքվել է որոշակի ժամկետով Օպերատորի Բաժանորդ մնալու պարտավորությամբ Պայմանագիր (Համաձայնագիր)՝ Ծառայության ժամանակավոր կասեցման դեպքում կասեցման ժամանակահատվածը (բացառությամբ FMC փաթեթի) չի ներառվում վերոնշյալ ժամկետի հաշվարկի մեջ և Բաժանորդ մնալու պարտավորության ժամկետը երկարաձգվում է կասեցման ժամանակահատվածին համապատասխան:

11.13 Ծառայությունների Կասեցման/սահմանափակման ժամանակ Բաժանորդի Հաշվին առկա, բոնուսները, ավտոմատ գեներացված առաջարկները և այլ արտոնությունները կարող են զրոյացվել՝ ըստ Ծառայության առաջարկի և Սակագնային Փաթեթի:

ԲԱԺԻՆ 12

Պատասխանատվություն

12.1 Բաժանորդը երաշխավորում է, որ ունի համապատասխան իրավասություն Դիմում-հայտում նշված Տարածքում Ծառայությունների մատուցման համար անհրաժեշտ մալուխների մոնտաժման և Սարքերի և/կամ Սարքավորումների տեղադրման աշխատանքերը թույլատրելու համար: Բաժանորդը պետք Օպերատորին հատուցի սույն կետում նշվածի առնչությամբ երրորդ անձանց կողմից ներկայացված բոլոր պահանջներով Օպերատորի կրած ողջ վնասը:

12.2 Բաժանորդն ընդունում է, որ Օպերատորն իրավասու է երրորդ անձանց կողմից սույն Պայմանների 12.1 կետում նշվածի առնչությամբ Օպերատորին ներկայացված հիմնավոր պահանջ(ներ)ի դեպքում միակողմանի կարգով լուծել (Տարածքում Ամրակցված ցանցով Ծառայություններ մատուցելու վերաբերյալ) Բաժանորդային Պայմանագիրը, ընդ որում, որոշակի ժամկետով բաժանորդ մնալու պարտավորությամբ Բաժանորդային Պայմանագր(եր)ի լուծման դեպքում Բաժանորդն է կրում համապատասխան պարտավորության ռիսկը:

12.3 Օրենքով թույլատրելի սահմաններում Օպերատորը և սույնով Բաժանորդը հրաժարվում է Բաժանորդային Պայմանագրի համաձայն մատուցվող Ծառայությունների հետ կապված միմյանց անուղղակի վնասների և բաց թողնված օգուտների հատուցման պահանջներ ներկայացնելուց:

12.4 Եթե Ծառայությունների նախատեսված պլանային ընդհատման կամ բաժանորդի դիմումի հիման վրա՝ ծառայությունների չնախատեսված ընդհատման տևողությունը հաշվարկային ժամանակահատվածում գերազանցում է 24 ժամը (որը չի ներառում բաժանորդի պատճառով Օպերատորի կողմից ընդհատումը) բաժանորդին տրամադրում է փոխհատուցում, որի չափը հաշվարկվում է հաշվարկային ամսվա համար հաշվարկվող ամսական գումարից՝ ծառայություններից օգտվելու անհնարինության ժամկետին համամասնորեն և չի կարող գերազանցել տվյալ հաշվարկային ժամանակահատվածի համար ծառայությունների մատուցման վճարի չափը:

Մանրամասն՝ Հանձնաժողովի 2008թ. թիվ 471Ն որոշում, https://www.arlis.am/hy/acts/226870 հղումով:

Փոխհատուցման տրամադրման ժամկետը չպետք է գերազանցի ծառայությունների որակի անկման կամ ծառայությունների ընդհատման (ներառյալ՝ խափանման կամ անսարքության) ամսվան հաջորդող երկրորդ ամսվա վերջին օրը:

Բաժանորդի կողմից ներկայացվող գրավոր դիմումը առնվազն ներառում է մատուցված ծառայությունները պայմանագրով նախատեսված պայմաններին չհամապատասխանելու մասին հիմնավոր տեղեկություններ և նշում ծառայության ընդհատման կամ որակի անկման խնդրի բացահայտման մասին Օպերատորին նախապես (ծառայության ընդհատման կամ որակի անկման ընթացքում) տեղեկացրած լինելու վերաբերյալ, Օպերատորի կողմից

առաջարկվող ծրագրային համակարգի միջոցով https://www.speedtest.net/ Ինտերնետ հասանելիության ծառայությունների տվյալների հոսքի ներբեռնման և վերբեռնման արագության չափման տվյալները՝ որին բաժանորդների հասանելիությունն ապահովվում է Օպերատորի կողմից:

12.5 Օպերատորն որևէ պատասխանատվություն չի կրում՝

12.5.1 Ծառայությունները չմատուցելու կամ ոչ պատշաճ մատուցելու համար, եթե դա Պահպանման Աշխատանքների և/կամ սույն Պայմանների 6.19. կետում սահմանված հանգամանքների և գործոնների և/կամ նմանատիպ այլ իրադարձությունների հետևանք է,

12.5.2 Օպերատորից ձեռք բերված սարքավորման կամ SIM քարտի միջոցով Բաժանորդին պատճառված վնասի համար, ինչպես նաև Բաժանորդի և այլ անձանց կողմից սարքավորմանը կամ SIM քարտին պատճառված վնասի համար,

12.5.3 եթե Բաժանորդը ոչ պատշաճ կամ անօրինական կերպով է օգտվում Ծառայություններից,

12.5.4 այլ օպերատորների և անձանց կողմից մատուցվող ծառայությունների և երրորդ անձանց կողմից կամ նրանց միջոցով Օպերատորի Ցանցի կամ այլ տեխնիկական միջոցների օգտագործմամբ Բաժանորդին մատուցվող Ծառայությունների որակի համար և չի տրամադրում որևէ երաշխիք այդ կապակցությամբ, այդ թվում՝ դրանց առնչությամբ ներկայացված հաշիվների համար: Անհրաժեշտության դեպքում նման ծառայությունները Բաժանորդին հասանելի դարձնելու համար երրորդ անձանց հետ հարաբերություններում Օպերատորը կարող է հանդիսանալ Բաժանորդի գործակալ՝ գործելով իր անունից և Բաժանորդի հաշվին,

12.5.5 իր գործընկերների (այդ թվում՝ օտարերկրյա) կամ գործակալների միջոցով փոխանցվող ազդանշանների կամ մատուցվող Ծառայությունների խափանման կամ դադարեցման հետևանքով առաջացած ընդհատումների, անջատումների, խափանումների կամ որոշակի տեսակի Ծառայությունների մեջ կատարված փոփոխությունների համար,

12.5.6 Օպերատորը երաշխավորում է լիցքավորման կայանի հայտարարված հզորության հոսանքի տրամադրման կարողությունը, սակայն որևէ պատասխանատվություն չի կրում լիցքավորման որակի և արագության համար կապված Բաժանորդի էլեկտրական մեքենայի առանձնահատկությունների, անսարքությունների կամ թերությունների հետ,

12.5.7 Team Energy հավելվածի սխալ աշխատանքի և կապի խափանումների համար, որոնք տեղի են ունեցել Բաժանորդի շարժական սարքի անսարքության հետևանքով,

12.5.8 ԷԼԿ-ին մուտքի անհնարինության համար՝ այլ տրանսպորտային միջոցների մուտքը դրան խոչընդոտելու կամ այլ էլեկտրական տրանսպորտային միջոցների լիցքավորման պորտը ժամանակին բաց թողնելու, ինչպես նաև այլ անձանց կողմից խոչընդոտելու դեպքում,

12.5.9 Բաժանորդի/Հաճախորդի էլեկտրական մեքենայի և/կամ այլ գույքի անվտանգության և պահպանության համար՝ ծառայություններ ստանալիս և/կամ ԷԼԿ-ի մոտ կայանատեղում կայանելիս

12.5.10 տեխ. անվտանգության այլ պայմանների խախտման դեպքում

12.5.11 Էլեկտրական մեքենային հասցված վնասների համար, եթե դրանք առաջացել են հետևյալ հանգամանքների արդյունքում.

12.5.12 եթե վնասը պատճառվել է էլեկտրաէներգիայի անորակ մատակարարման հետևանքով, այդ թվում՝ լարման տատանումների, հաճախականության անկումների կամ ցանցային այլ խափանումների պատճառով:

12.5.13 եթե էլեկտրական մեքենայի հիմնական հանգույցները (լիցքավորման պորտը, մարտկոցները, BMS համակարգը, միակցիչները), ինչպես նաև լիցքավորիչը, չեն հանդիսանում արտադրող ընկերության կողմից տրամադրված և/կամ սերտիֆիկացված պահեստամասեր:

12.5.14 լիցքավորման ընթացքում օգտագործողի կողմից ոչ սերտիֆիկացված ադապտերների, անցումների կամ այլ կողմնակի սարքերի օգտագործման հետևանքով

12.5.15 եթե լիցքավորման ընթացքում վնասը հասցվել է ջրի, խոնավության կամ շրջակա միջավայրի այլ գործոնների ներգործության պատճառով:

12.5.16 եթե վնասը առաջացել է օգտագործողի կողմից լիցքավորման սահմանված կանոնների, հրահանգների և կանոնակարգերի խախտման հետևանքով

12.5.17 լիցքավորման միակցիչի (connector) արգելափակման համար, եթե դա պայմանավորված է մեքենայի ծրագրային ապահովման կամ օգտագործողի սխալ գործողությունների հետևանքով:

12.5.18 էլեկտրական մեքենայի մարտկոցների ներքին անսարքության հետևանքով առաջացած ինքնաբռնկման կամ հրդեհի դեպքում:

12.5.19 Բաժանորդի/Հաճախորդի կողմից կրած անուղղակի վնասների, բաց թողնված օգուտների կամ չստացված եկամուտների համար:

12.5.20 երրորդ անձանց գործողությունների հետևանքով պատճառված վնասների, այդ թվում՝ գողության կամ վանդալիզմի համար:

12.6 **Բաժանորդը պատասխանատվություն է կրում՝**

12.6.1 սույն Պայմանների խախտմամբ Ծառայություններն օգտագործելու դեպքում Օպերատորին կամ երրորդ անձանց կամ նրանց գույքին պատճառված վնասի համար,

12.6.2 Սարքի և/կամ Սարքավորումների, դրա պատկանելիքների, մալուխների և այլ պարագաների պահպանման համար, իսկ դրանց փչացման, սխալ օգտագործման, կորստի, վնասվածքի կամ հափշտակության դեպքում Օպերատորին պատճառած վնասի փոխհատուցման համար,

12.6.3 Օպերատորի կողմից Ծառայություններին տրամադրված հասանելիության միջոցով իր կողմից կատարվող գործարքների (էլեկտրոնային վճարումներ, գնումներ և այլն), էլեկտրոնային խաղերի և այլ շահումով խաղերի մասնակցության, դրանց հետևանքների և ռիսկերի համար,

12.6.4 Բաժանորդի կողմից Օպերատորին տրամադրված կապի միջոցներին ուղարկված որևէ տեղեկության, այդ թվում՝ անձնական տվյալները նույն կապի միջոցներին հասանելիություն ունեցող անձանց հայտնի դառնալու և դրա հետևանքների համար,

12.6.5 Մատուցվող Ծառայությունների Տարածքում մալուխների մոնտաժման և Սարքերի և/կամ Սարքավորումների տեղադրման համար անհրաժեշտ թույլտվություններ ստանալու, ինչպես նաև դրանց արդյունքում երրորդ կողմին պատճառած վնասի համար,

12.6.6 Բաժանորդային Պայմանագրի կնքումից հետո սույն Պայմանների, Բաժանորդային Պայմանագրի, Ցանցի Ծածկույթի, Ծառայությունների ցանկի, սակագների և Կանոնների, Կարգերի փոփոխություններին ծանոթանալու համար,

12.6.7 սույն Պայմաններով սահմանված բոլոր դեպքերում օգտագործած Ծառայությունների դիմաց առաջացած պարտքերի վճարման՝ այդ թվում՝ գումարային սահմանաչափը կամ փաստացի Հաշվեկշիռը գերազանցելու հետևանքով գոյացած պարտքի վճարման համար,

12.6.8 երրորդ անձանց կողմից իր Սարքի, SIM քարտի, Համարի կամ սարքավորման միջոցով Ծառայությունների ցանկացած օգտագործման և նման օգտագործման հետևանքով առաջացած բացասական հետևանքների, այդ թվում՝ պարտքերի մարման պարտավորության համար (Օպերատորի կողմից տրամադրված սարքավորման, SIM քարտը՝ չլիազորված անձի կողմից օգտագործելու դեպքերում դրանց տիրապետողը համարվում է Բաժանորդը, իսկ իրականացված գործողությունները կատարված Բաժանորդի անունից և ի շահ Բաժանորդի),

12.6.9 Բաժանորդի վերջնակետային սարքավորումից վիրուսային ծրագրերի և/կամ սպամի առաքման դեպքում Բաժանորդի գործողության կամ անգործության հետևանքով Օպերատորին պատճառած վնասի համար:

12.7 **Բաժանորդը պարտավոր է՝**

12.7.1 մինչև որևէ խնդրի մասին Օպերատորին տեղեկացնելը ստուգել սարքավորումները և համոզվել, որ պատճառը իր սարքավորումը չէ և խնդիրը Բաժանորդի վերահսկողությունից դուրս է,

12.7.2 եթե խնդրի պատճառը Օպերատորի Ցանցն է կամ այն գտնվում է Օպերատորի վերահսկողության ներքո, անմիջապես տեղեկացնել Օպերատորին, որպեսզի վերջինս ձեռնարկի համապատասխան միջոցառումներ (այդ մասին Օպերատորին ուշ տեղեկացնելու դեպքում Օպերատորը պատասխանատվություն չի կրում տեղեկացնելուն նախորդող ժամանակահատվածում ծագած ռիսկերի համար):

12.8 Բաժանորդը զրկվում է մատուցվող Ծառայության ընդհատման կամ դրա որակի հետ կապված փոխհատուցման որևէ պահանջ ներկայացնելու իրավունքից, եթե առաջացած խնդիրների մասին Հանձնաժողովի կողմից սահմանված և սույն Պայմանների 12.4 կետում ամրագրված կարգով չի տեղեկացրել Օպերատորին, որի հետևանքով բաց է թողնվել Ծառայության որակի

հետ կապված խնդիրների առկայության փաստը հաստատելու և պատճառները պարզաբանելու տեխնիկական հնարավորությունը: Փոխհատուցման պահանջ-դիմումը ներկայացվում է մինչև ծառայությունների մատուցման դիմաց Օպերատորի կողմից վճարման համար սահմանված ժամկետի ավարտը կամ մինչև հաշվարկային ժամանակաշրջանին հաջորդող ամսվա 15-ը:

12.9 Բաժանորդի կողմից SIM քարտի, Սարքի կամ սարքավորման կորստի կամ հափշտակության մասին Օպերատորին սահմանված կարգով տեղեկացնելու և Բաժանորդի պահանջով Ծառայությունները կասեցնելու պահանջի դեպքում Օպերատորն իրավասու է մինչև պահանջի կատարումը ձեռնարկել բոլոր անհրաժեշտ միջոցները Բաժանորդի անձը նույնականացնելու համար, սակայն պատասխանատվություն չի կրում չլիազորված անձի կողմից ներկայացվող նմանատիպ պահանջների և դրանց կատարման համար:

12.10 Կողմերը պատասխանատվություն չեն կրում սույն Պայմաններով ստանձնած պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար, եթե պատճառը անհաղթահարելի ուժի (ֆորս-մաժորի) ազդեցությունն է:

Սույնով Բաժանորդը համաձայնվում է, որ ֆինանսական դրության վատթարացումը չի կարող դիտարկվել որպես ֆորս-մաժոր, և Բաժանորդը պարտավոր է ամբողջությամբ վճարել մատուցված Ծառայությունների համար:

12.11 Այն դեպքերում, երբ Ծառայությունների պատշաճ մատուցման (խափանումների պատճառները հայտնաբերելու և շտկելու) համար անհրաժեշտ է Օպերատորի համապատասխան մասնագետի այցելությունը Տարածք, ապա Բաժանորդի կողմից նման հնարավորություն չստեղծելու դեպքում, Բաժանորդը զրկվում է Ծառայության մատուցման կամ դրա որակի հետ կապված Օպերատորին որևէ պահանջ ներկայացնելու իրավունքից:

12.12 Սույնով Բաժանորդն ընդունում և համաձայնվում է, որ եթե առանց նախապես Օպերատորի համաձայնությունը ստանալու ինքը (և/կամ իր իմացությամբ կամ ցուցումով գործող երրորդ անձը) Բաժանորդային Պայմանագրով տրամադրված Համարը (անկախ Համարի տեսակից և այն օգտագործելու համար Օպերատորին վճարելու փաստից) և/կամ դրա նկատմամբ Բաժանորդի ունեցած օգտագործման իրավունքն այլ անձի փոխանցելուն (օտարելուն) ուղղված հայտարարություն, գովազդ, հրապարակային առաջարկին ուղղված հայտարարություններ է տարածում (ցանկացած եղանակներով), ապա դա կդիտվի որպես Բաժանորդի կողմից Բաժանորդային Պայմանագրի խախտում, որի պարագայում Օպերատորն իրավունք ունի (այդ մասին Բաժանորդին տեղեկացնելով)՝

12.12.1 ապակտիվացնել, արգելափակել Բաժանորդին տրամադրված Համար(ներ)ը,

12.12.2 լուծել Բաժանորդային Պայմանագիրը, տվյալ Համար(ներ)ի մասով,

12.12.3 կիրառել Բաժանորդային Պայմանագրով նախատեսված պատասխանատվության այլ միջոցներ:

12.13 Բաժանորդը սույնով ընդունում և համաձայնում է, որ Օպերատորի կողմից սույն Պայմանների, Անձնական տվյալների մշակման քաղաքականության կամ ՀՀ օրենսդրությամբ սահմանված

կարգով Բաժանորդի վերաբերյալ տեղեկությունների (անձնական տվյալների) բացահայտման դեպքում իրավունք չունի Օպերատորից պահանջել որևէ փոխահատուցում:

ԲԱԺԻՆ 13

Լուծում

13.1 Բաժանորդային Պայմանագիրը կարող է լուծվել ինչպես Բաժանորդի, այնպես էլ Օպերատորի նախաձեռնությամբ: Պայմանագրի լուծման համաձայնությունը կարող է կնքվել այն եղանակով, ինչ եղանակով կնքվել է պայմանագիրը:

13.2 Օպերատորն իրավունք ունի միակողմանի լուծել Բաժանորդային Պայմանագիրը, եթե՝

13.2.1 պայմանագիր կնքելու, օպերատորի համակարգերում բաժանորդի տվյալների համապատասխան գրանցում կատարելու և ծառայության ակտիվացման համար բաժանորդի կողմից չի ներկայացվել կամ ներկայացվել է սխալ փաստաթղթերի փաթեթ,

13.2.2 Ծառայության համար սահմանված վճարումները չեն կատարվել Բաժանորդային Պայմանագրով նախատեսված ժամկետում,

13.2.3 Բաժանորդը խախտել է Բաժանորդային Պայմանագրի, սույն Պայմանների դրույթները կամ Հատուկ առաջարկների համար սահմանված պայմանները,

13.2.4 ամրակցված ցանցի ծառայությունների մատուցման Բաժանորդային պայմանագրի կնքումից հետո պարզվել է տեխնիկական պայմանների բացակայությունը, սպառված լինելը տվյալ տարածքում,

13.2.5 Բաժանորդը հնարավորություն չի ստեղծել դիմումում նշված հասցեում (Տարածքում) իրականացնել գծի տեղադրման աշխատանքներ, տեղադրել և կարգաբերել Սարքը և միացնել այն Օպերատորի Ցանցին, կամ հրաժարվում է ծառայությունից մինչև տեղադրման աշխատանքների սկսելը,

13.2.6 Կանխավճարային կամ Հետվճարային համակարգում գործող Ծառայությունը, Ծառայությունների/Սակագնային փաթեթը Օպերատորի կողմից դադարեցվում է ֆինանսապես աննպատակահարմարության կամ տեխնիկական անհնարինության պատճառով: Պայմանագիրն համարվում է լուծված,եթե սույն կետում նշված Ծառայությունից, Ծառայությունների/Սակագնային փաթեթից օգտվող Բաժանորդները նախապես տեղեկացվել են այդ մասին և չեն ընդունել սահմանված ժամկետում որևէ այլ Ծառայության, Ծառայությունների/Սակագային փաթեթի անցում կատարելու Օպերատորի առաջարկը:

13.2.7 Ծառայությունների կասեցումից հետո սահմանված կարգով և ժամկետներում Ծառայությունները չեն վերակտիվացվել, Օպերատորին դիմել է բջջային կապի համարի փաստացի օգտագործողը և սահմանված Կարգին համապատասխան ներկայացրել հավաստի տվյալներ առ այն, որ տվյալ Համարը (SIM քարտը) օգտագործում և տիրապետում է իր կողմից (փաստացի օգտատեր),

13.2.8 Ծառայությունների մատուցման դադարեցման մասին Օպերատորին դիմել է Ամրակցված ցանցով մատուցվող ծառայության տարածքի նկատմամբ սեփականության, տվյալ տարածքի օգտագործման իրավունք ունեցող անձը և ներկայացրել է հավաստի տվյալներ,

13.2.9 Բաժանորդը չի ցանկանում ստանալ Բաժանորդային Պայմանագրում նշված որևէ Ծառայություն, սակայն հրաժարվում է այդ մասին համապատասխան դիմում (համաձայնագիր) ստորագրել և շարունակում է օգտվել բաժանորդագրված այլ Ծառայություն(ներ)ից, Բաժանորդային Պայմանագիրը չմատուցված Ծառայության(ներ)ի մասով համարվում է փոփոխված/լուծված (եթե Օպերատորը նման փոփոխությանը դեմ չէ և/կամ այդ փոփոխությունը որևէ անցանկալի հետևանք չի առաջացնում Օպերատորի համար) և այդ փոփոխությունը Բաժանորդային Պայմանագրում փաստաթղթային տարբերակով չամրագրելու հետևանքով առաջացող բոլոր բացասական հետևանքների համար պատասխանատվությունը կրում է Բաժանորդը:

13.2.10 Բաժանորդային Պայմանագրի կնքման պահից երեք ամիսների ընթացքում Կանխավճարային համակարգի SIM քարտին ամրակցված համարը չի ակտիվացվել. Հիմնական Պայմանագրի ներքո կնքված Պայմանագիրը համարվում է լուծված չակտիվացված համարի մասով:

13.2.11 Կանխավճարային համակարգի բացասական կամ զրոյական հաշվեկշռով համարին երեք ամիս և ավելի ժամկետում վճարում, հաշվի լիցքավորում չի կատարվել, համարը չի օգտագործվել ելքային կամ մուտքային (ձայնային կամ ոչ ձայնային) զանգերի, ելքային կարճ հաղորդագրության ուղարկման համար:

Պայմանագրի լուծումից երեք ամիս (90 օր) հետո համարը ենթակա է վաճառքի:

13.2.12 Բջջային կապի կանխավճարային համակարգի դրական հաշվեկշռով համարին երեք ամիս և ավելի ժամկետում վճարում, հաշվի լիցքավորում չի կատարվել, համարը չի օգտագործվել ելքային կամ մուտքային (ձայնային կամ ոչ ձայնային) զանգերի, կարճ հաղորդագրության ուղարկման համար: Պայմանագրի լուծումից հետո դրական հաշվեկշռով համարը պահպանվում է 6(վեց) ամիսների ընթացքում: Նշված ժամանակահատվածում Պայմանագիրը հնարավոր է վերակնքել, իսկ այդ ժամկետի ավարտից հետո նույն համարի վերականգնումը հնարավոր է ըստ համարի հասանելիության:

~~13.2.13~~ Հետվճարային համակարգի Բաժանորդի կողմից վճարում չկատարելու արդյունքում Ծառայությունների մատուցման կասեցման սահմանված ժամկետում Ծառայությունը վերամիացնելու/վերականգնելու ուղղությամբ գործողություններ (վճարում, դիմում-հայտ) չեն կատարվել: Պայմանագրի լուծումից երեք ամիս (90 օր) հետո համարը ենթակա է վաճառքի, եթե բաժանորդի կողմից չի ներկայացվել:

13.2.14 Օպերատորի լիցենզիաները և/կամ թույլտվությունները դադարեցվել են:

13.2.15 ՀՀ օրենսդրությամբ, սույն Պայմաններով և Բաժանորդային Պայմանագրով սահմանված այլ դեպքերում:

13. 3 Սույն Բաժնի 13.2.5, 13.2.10, 13.2.9, 13.2.12, 13.8 կետերով Պայմանագրի լուծումը կատարվում է առանց Բաժանորդին նախապես ծանուցելու:

13. 4 Օպերատորի նախաձեռնությամբ Պայմանագրի լուծումից երեք ամիս անց, իսկ Բաժանորդի նախաձեռնությամբ պայմանագրի լուծման դեպքում հաջորդ իսկ օրը, համարը համարվում է ազատ և ենթակա վաճառքի:

13. 5 Բաժանորդն իրավունք ունի

13.5.1 Ցանկացած ժամանակ լուծելու Բաժանորդային պայմանագիրը՝մարելով Օպերատորի հանդեպ ունեցած՝ այդ թվում վերջնահաշվարկի արդյունքում, բոլոր պարտքերը, ինչպես նաև սահմանված ժամկետներում հանձնման-ընդունման ակտով վերադարձնել ստացված Սարքը, սարքավորումը (եթե այլ բան նախատեսված չէ Կողմերի միջև կնքված Պայմանագրով):

Սարքը/ սարքավորումը չվերադարձնելու դեպքում հաշվարկվում և ձևավորվում է վերջնական հաշիվ, որի մեջ ներառվում է Օպերատորի կողմից Պայմանագրի կնքման պահին սահմանված տուգանքի գումարը:

13.5.2 Առանց հավելյալ տույժ, տուգանքների միակողմանի դադարեցնելու Պայմանագրի գործողությունը՝ Պայմանագրում նախատեսվող բաժանորդի իրավական վիճակը վատթարացնող փոփոխությունների, լրացումների հետ անհամաձայնության դեպքում, նախքան դրանց ուժի մեջ մտնելը, (բացառությամբ այդ փոփոխությունների, լրացումների՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջներով պայմանավորված դեպքերի), իսկ որոշակի ժամկետով բաժանորդագրման պարտավորության պայմանով ինքնաբերաբար երկարաձգում նախատեսող Պայմանագրերի դեպքում՝ գործողության ժամկետի ինքնաբերաբար երկարաձգումից 30 օրվա ընթացքում, այդ մասին գրավոր ծանուցելով Օպերատորին:

Եթե նշված ժամկետներում Բաժանորդն Օպերատորին չի ծանուցել պայմանագրի լուծման իր մտադրության մասին և շարունակում է օգտվել Ծառայություններից, ապա բաժանորդի իրավական վիճակը վատթարացնող փոփոխություններ/լրացումներ կատարելու Օպերատորի առաջարկը համարվում է Բաժանորդի կողմից գործողությամբ ընդունված (ակցեպտավորված):

13.6 Բաժանորդային Պայմանագրի լուծման համար Բաժանորդը պարտավոր է այցելել Օպերատորի Վաճառքի և սպասարկման կենտրոն և լրացնել դիմում-հայտի ձևանմուշը, եթե տվյալ պահին այլ բան սահմանված չէ Օպերատորի կողմից, իսկ «My Team» հավելվածի միջոցով էլեկտրոնային եղանակով կնքված Պայմանագրերի դեպքում կարող է (ունի հնարավորություն) այն լուծելու նույն եղանակով:

13.7 Եթե Բաժանորդն ունի Բաժանորդային Պայմանագրով (Համաձայնագրով) սահմանված ժամկետով Բաժանորդ մնալու պարտավորություն, պայմանագրի լուծումը կատարվում է համաձայն այդ պարտավորությունների պայմանների:

13. 8 Օպերատորի Ցանցից այլ ցանց Համարի Տեղափոխելիության դեպքում տեղափոխվող Համարի մասով Բաժանորդային Պայմանագիրը համարվում է լուծված տեղափոխման պահից՝ անկախ Օպերատորի մոտ Բաժանորդի հաշվեկշռից:

13. 9 Բաժանորդային Պայմանագրի լուծումը, անկախ դրա հիմքերից, չի ազատում Բաժանորդին մինչև լուծման պահը և դրա հետ կապված Օպերատորի հանդեպ Բաժանորդի ունեցած պարտավորությունների պատշաճ կատարումից, այն է՝ վճարել Բաժանորդի պարտքը, բոլոր կիրառելի տուգանքները, հրաժարագինը կամ Բաժանորդային Պայմանագրով սահմանված այլ վճարները:

13. 10 Բաժանորդային Պայմանագրի (բացառությամբ կանխավճարային բաժանորդագրության) լուծման դեպքում Օպերատորի հանդեպ Բաժանորդի ունեցած բոլոր պարտքերը (այդ թվում տուգանքներ և այլն) մարելուց հետո Բաժանորդի Հաշվին առկա դրական Հաշվեկշիռը (մնացորդը) հետ ստանալու համար Բաժանորդը պարտավոր է 1(մեկ) տարվա ընթացքում Օպերատորի կողմից սահմանված ձևով դիմում ներկայացնել Վաճառքի և սպասարկման կենտրոն: Մնացորդի վերադարձը կատարվում է միայն անկանխիկ եղանակով:

13.11 Կանխավճարային համակարգի Բաժանորդային Պայմանագրի լուծման դեպքում չօգտագործված/կանխադրված գումարը ենթակա չէ վերադարձման:

ԲԱԺԻՆ 14

Անվտանգություն

14.1 Օպերատորը պատասխանատվություն չի կրում երրորդ անձանց կողմից ուղարկված սպամի, իրականացված հակերային գործունեության, վիրուսների փոխանցման և դրա արդյունքում Բաժանորդին պատճառված վնասների համար: Բաժանորդը պարտավոր է անձամբ պաշտպանել իր վերջնակետային սարքավորումը և համակարգերը վիրուսներից և այլ անձանց անօրինական միջամտությունից և պատասխանատվություն է կրում նման վիրուսների կամ անօրինական միջամտության հետևանքով Օպերատորին և/կամ այլ անձանց պատճառված վնասի, ինչպես նաև նման վիրուսների կամ անօրինական միջամտության հետևանքով առաջացած պարտքերի մարման համար:

14.2 Օպերատորը պատասխանատվություն չի կրում Ծառայությունների և Օպերատորի Ցանցի միջոցով ստացված տեղեկության և բովանդակության ճշտության, օրինականության և որակի, այդ թվում՝ զանգերի և հաղորդագրությունների բովանդակության համար, եթե Օպերատորը չէ դրանց բացառիկ իրավատերը: Օպերատորի Ցանցի միջոցով ստացված, փոխանցվող կամ օգտագործվող ցանկացած տեղեկություն, ծառայություն կամ բովանդակություն օգտագործվում է Բաժանորդի ռիսկով և պատասխանատվությամբ, և Բաժանորդն է կրում դրանց հետ կապված մտավոր սեփականության իրավունքների խախտման, ինչպես նաև դրանց անօրինական օգտագործման հետ կապված ռիսկերը:

14.3 Օպերատորն իրավունք ունի Ծառայությունների և/կամ բաժանորդների հեռախոսազանգերի սպասարկման որակի բարձրացման, ինչպես նաև անվտանգության նկատառումներից ելնելով ձայնագրել Բաժանորդի խոսակցությունները Օպերատորի Կոնտակտային կենտրոնի կամ Վաճառքի և սպասարկման կենտրոնների աշխատակիցների հետ: Բաժանորդային Պայմանագրի

կնքման պահից Բաժանորդը տալիս է իր համաձայնությունը այդպիսի ձայնագրման վերաբերյալ և ընդունում, որ նման ձայնագրություններն ունեն ապացույցի ուժ:

ԲԱԺԻՆ 15

Անձնական տվյալների պաշտպանություն

15.1 Բաժանորդային Պայմանագիրը կնքելով Բաժանորդը տալիս է համաձայնություն իր անձնական տվյալների մշակումը Օպերատորի ինտերնետային կայքում հրապարակված Անձնական տվյալների մշակման ծանուցում/անձնական տվյալների պաշտպանության քաղաքականության համաձայն իրականացնելու համար:
Ավելին՝ https://www.telecomarmenia.am/file_manager/privacy_policy/privacy_policy.pdf)

15.2 Օպերատորն իրավասու է բացահայտել իր բաժանորդների կողմից օգտագործված ծառայությունների դիմաց վճարումների, պարտքերի, վճարումների սովորությունների կամ պարտավորությունների կամ դրանց կատարման մասին տեղեկությունները՝ «Վարկային տեղեկատվության շրջանառության և վարկային բյուրոների գործունեության մասին» և «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» և ՀՀ այլ օրենքներով նախատեսված կարգով և սահմաններում:

15.3 Օպերատորը կամ իր գործընկերները, որպես մարքեթինգային կամ առևտրային գործունեության մի մաս, ինչպես նաև պարտքերի հավաքագրման կամ Բաժանորդի Անձնական տվյալների ճշգրտման և թարմացման համար՝ գրավոր ձևով, հեռախոսով, SMS ծառայության միջոցով կամ այլ կերպ կարող են կապ հաստատել Բաժանորդի հետ՝ օգտագործելով Բաժանորդի անձնական տվյալները: Նշվածը ներառում է նաև Օպերատորի կողմից մատուցվող ծառայությունների վերաբերյալ Բաժանորդին տեղեկատվական և գովազդային բնույթի հաղորդագրությունների ուղարկումը: Սույնով Բաժանորդը թույլատրում է այս ձևով կապի հաստատումը իր հետ:

15.4 Բաժանորդը պարտավոր է բաժանորդագրվելիս և Բաժանորդային Պայմանագրի գործողության ողջ ընթացքում ապահովել Օպերատորին տրամադրվող տեղեկատվության ճշգրտությունը և հավաստիությունը և պատասխանատվություն է կրում դրա համար: Բաժանորդը պարտավոր է Օպերատորին պատշաճ կերպով տեղեկացնել իր վերաբերյալ գրանցված տեղեկություններում (հասցե, անձնական տվյալներ, բանկային տվյալներ, կազմակերպաիրավական ձև, ֆիրմային անվանում և այլն) տեղի ունեցած փոփոխությունների մասին՝ դրանց իրավական ուժ ստանալու պահից հնարավորինս սեղմ ժամկետներում: Այդ փոփոխությունների մասին Օպերատորին չհայտնելու հետ կապված բոլոր հնարավոր ռիսկերը (բացասական հետևանքները) կրում է Բաժանորդը:

ԲԱԺԻՆ 16

Պատշաճ ծանուցում

16.1 Բաժանորդի կողմից դիմումում նշված հասցեն, ինչպես նաև կոնտակտային հեռախոսահամարը համարվում են հիմք հետագա բոլոր գործառույթների, այդ թվում ծանուցումների համար: Ծանուցումը կհամարվի պատշաճ կատարված, եթե այն ուղարկվել է բաժանորդի կողմից նշված հասցեով, կոնտակտային հետախոսահամարով (SMS)՝ անկախ բաժանորդի կողմից այն ստանալու փաստից:

16.2 Բաժանորդային Պայմանագրի շրջանակներում Բաժանորդի և Օպերատորի կողմից ուղարկված ծանուցումները, այդ թվում՝ հաշիվները և դիմումները, համարվում են պատշաճ, եթե հանձնվել են առձեռն կամ ուղարկվել են էլեկտրոնային կամ կապի այլ միջոցներով՝ Բաժանորդային Պայմանագրում նշված բնակության/հաշվառման/ իրավաբանական կամ փաստացի գործունեության հասցեներով և/կամ էլեկտրոնային փոստի հասցեներով և/կամ հեռախոսահամարներին, եթե այլ բան սահմանված չէ Բաժանորդային Պայմանագրով:

16.3 Բաժանորդը ընդունում և համաձայն է, որ իր և Օպերատորի միջև վեճերի ծագման դեպքում դատական կարգով (թե՛ հայցային վարույթի կարգով, թե՛ վճարման կարգադրություն արձակելու գործերի վարույթի կարգով), ինչպես նաև արբիտրաժային վարույթի կարգով վեճը լուծելիս՝ Բաժանորդի և դատարանի (ցանկացած դատական ատյանի), ինչպես նաև Արբիտրաժի Բաժանորդի և Օպերատորի, Օպերատորի ու դատարանի (ցանկացած դատական ատյանի), ինչպես նաև Արբիտրաժի միջև՝ վարույթների հետ կապված բոլոր ծանուցումներն ինչպես Բաժանորդին, այնպես էլ Օպերատորին ուղարկվեն էլեկտրոնային կամ կապի այլ միջոցներով՝ Բաժանորդային Պայմանագրում և/կամ Էլեկտրոնային՝ թվային, գրիչով ստորագրելու մասին համաձայնագրում և/կամ այլ համաձայնագրերում նշված էլեկտրոնային փոստի հասցե(ներ)ին և/կամ հեռախոսահամար(ներ)ին: Սույնով Բաժանորդը համաձայն է, որ սույն կետում նշված եղանակներից ցանկացած մեկով կատարված ծանուցումները համարվում են պատշաճ, և դրանց համար ստացման (ընթերցման) մասին հետադարձ ծանուցման (տեղեկացման) պահանջ չի սահմանվում, բացառությամբ էլեկտրոնային փոստով կատարված ծանուցումների, որոնց դեպքում Բաժանորդը համարվում է պատշաճ ծանուցված այն դեպքում, երբ առկա է ծանուցումն ստանալու մասին էլեկտրոնային հավաստում (եթե նույնիսկ բացակայում է այն կարդալու մասին էլեկտրոնային հավաստումը): Սույն կետի նպատակների համար Օպերատորի էլեկտրոնային փոստի հասցեն է court@telecomarmenia.am:

ԲԱԺԻՆ 17

Տարաձայնությունների կարգավորում

17.1 Սույն Պայմանները և Բաժանորդային Պայմանագիրը կարգավորվում և մեկնաբանվում են ՀՀ օրենսդրության համաձայն:

17.2 Օպերատորի և Բաժանորդի միջև սույն Պայմանների կամ Բաժանորդային Պայմանագրի կապակցությամբ ծագած դրամական (գույքային) վեճերը (այսուհետ՝ Վեճ) Կողմերից որևէ

մեկի կողմից կարող է հանձնվել դատարանի (այսուհետ՝ Դատարան) կամ ՀՀ նոտարական պալատի քննությանը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով և դրան համապատասխան կամ

-«Արբիտրաժ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Արբիտրաժ 1) կամ

-«Միջազգային Արբիտրաժային դատարան» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Արբիտրաժ 2) կամ

-«Գործարարների, ներդրողների իրավական աջակցության միավորում» ՀԿ Արբիտրաժային դատարան հիմնարկի (այսուհետ՝ Արբիտրաժ 3) կամ

-«Հայաստանի Բանկերի միության ֆինանսական արբիտրաժ» հիմնարկի (այսուհետ՝ Արբիտրաժ 4) կամ

-«Կրեդիտ կոմպրոմիս» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Արբիտրաժ 5) կամ

-«ՀՀ Առևտրաարդյունաբերական պալատին կից մշտապես գործող արբիտրաժային հաստատություն» հիմնարկի (այսուհետ՝ Արբիտրաժ 6, իսկ նշված արբիտրաժներից յուրաքանչյուրն առանձին կամ բոլորը միասին՝ Արբիտրաժ)

քննությանը՝ «Առևտրային արբիտրաժի մասին» ՀՀ օրենքին, ՀՀ այլ նորմատիվ իրավական ակտերին, պահանջի ներկայացման (վճռի կայացման) ժամանակ Արբիտրաժի գործող կանոնակարգին համապատասխան լուծելու համար:

17.3 Կողմի հայեցողությամբ, սույն Պայմանների կամ Բաժանորդային Պայմանագրի շրջանակում, Վեճի լուծումը որևէ Արբիտրաժի կամ Դատարանի կամ ՀՀ նոտարական պալատի քննությանը հանձնելը հիմք է համապատասխանաբար Արբիտրաժի կամ Դատարանի կամ ՀՀ նոտարական պալատի կողմից այն ըստ էության լուծելու համար:

17.4 Վեճի քննությունն սույն Պայմանների 17.2 կետում նշված մարմիններից որևէ մեկի կողմից սկսելը (վարույթ ընդունելը) բացառում է նույն կետում նշված մյուս մարմինների կողմից Վեճի քննությունը, իսկ սկսված (հարուցված) լինելու դեպքում հիմք է Վեճը (հայցը, վճարման կարգադրության դիմումը, գումարի բռնագանձման պահանջով կարգադրություն արձակելու վերաբերյալ դիմում, պահանջը և այլն) առանց քննության թողնելու (կարճելու կամ պահանջի քննությունը դադարեցնելու) համար:

17.5 Օպերատորի և Բաժանորդի միջև սույն Պայմանների կամ Բաժանորդային Պայմանագրի կապակցությամբ ծագած և սույն Պայմանների 17.2 կետում չնշված վեճերը ենթակա են լուծման ՀՀ դատարաններում, իսկ Օպերատորի և ՀՀ-ում հաշվառում չունեցող Բաժանորդների (ՀՀ քաղաքացիների, օտարերկրյա քաղաքացիների և քաղաքացիություն չունեցող անձանց) միջև սույն Պայմանների կամ Բաժանորդային Պայմանագրի կապակցությամբ ծագած սույն Պայմանների 17.2 կետում չնշված վեճերը ենթակա են լուծման Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանում՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 23-րդ հոդվածին համապատասխան:

17.6 Սույն Պայմանների 17-րդ՝ «Տարաձայնությունների կարգավորում» բաժնում սահմանված վեճերի լուծման բոլոր նպատակների համար կիրառվում են ծանուցման՝ սույն Պայմանների 16.3 կետի դրույթները:

ԲԱԺԻՆ 18

Եզրափակիչ դրույթներ

18.1 Սույն Պայմաններն ուժի մեջ են 2021 թվականի ապրիլի 12-ից:

Եթե մինչև սույն Պայմանների ուժի մեջ մտնելը Բաժանորդը Օպերատորի հետ կնքել է Բաժանորդային պայմանագիր և/կամ օգտվում է Օպերատորի կողմից մատուցվող ծառայություններից, ընկերության ինտերնետային կայքում փոփոխություններով և լրացումներով սույն Պայմանները հրապարակվելու պահից գործում են այդ Պայմանները: Եթե Բաժանորդը 10-օրյա ժամկետում շարունակում է օգտվել Օպերատորի Ծառայություններից, ապա սույն Պայմանները համարվում են Բաժանորդի կողմից համաձայնեցված (ակցեպտավորված) և գործողությամբ ընդունված:

18.2 Սույն Պայմաններն ուժի մեջ մտնելու օրվա դրությամբ գործող Ծառայությունների/ Սակագնային Փաթեթները, Առաջարկների Նկարագրերը, Ծառայությունների հրապարակված սակագները (Գնացուցակը), Կարգերն ու Կանոնները մնում են ուժի մեջ:

18.3 Բաժանորդային Պայմանագիրը և դրանում կատարվող փոփոխությունները, լրացումները, դրա բաղկացուցիչ մասը կազմող կամ դրան վերաբերող այլ փաստաթղթերը և ծանուցումները կարող են հաստատվել ստորագրությունները և/կամ կնիքները թղթային օրինակների վրա դնելու միջոցով, էլեկտրոնային եղանակով ստորագրելու, կնիքի և ստորագրության ֆաքսիմիլային վերարտադրությամբ կամ Օպերատորի կողմից սահմանված այլ կարգով:

18.4 Օպերատորն իրավասու է հայտարարել ակցիաներ (խթանիչ առաջարկներ) և/կամ զեղչեր, որոնք հայտարարված ժամանակահատվածում կհանդիսանան Բաժանորդային Պայմանագրի լրացում և դրա բաղկացուցիչ մասը: Այդ տեղեկությունը, այդ թվում՝ դրանք Բաժանորդի կողմից ընդունելու կարգը հրապարակվում է Օպերատորի Ինտերնետային կայքում և/կամ հասանելի է Վաճառքի և սպասարկման կենտրոններում:

18.5 Օպերատորն իրավունք ունի ցանկացած ժամանակ (միակողմանիորեն) Բաժանորդային Պայմանագրում, այդ թվում՝ սույն Պայմաններում, Ծառայությունների Սակագներում, Սակագնային փաթեթներում կատարել փոփոխություններ և լրացումներ:

18.6 Բաժանորդի համար բարենպաստ փոփոխությունները, լրացումներն ուժի մեջ են մտնում Օպերատորի պաշտոնական ինտերնետային կայքում հրապարակվելու կամ հրապարակման մեջ նշված օրը: Օպերատորի հայեցողությամբ այդ փոփոխությունների/լրացումների մասին Բաժանորդները կարող են ծանուցվել նաև այլ եղանակներով, այդ թվում՝ կարճ հաղորդագրություններ (SMS) միջոցով, բացառությամբ այն դեպքերի, երբ Բաժանորդը գրավոր կարգով հրաժարվել է սույն կետում նշված ծանուցումը ստանալուց:

18.7 Պայմանագրերում նախատեսվող Բաժանորդի իրավական վիճակը վատթարացնող փոփոխությունները, լրացումներն ուժի մեջ են մտնում Օպերատորի ինտերնետային կայքում հրապարակվելուց, բաժանորդներին այդ մասին կարճ հաղորդագրությունների (SMS) կամ ավտոմատ հեռախոսազանգերի միջոցով կամ այլ եղանակով ծանուցելուց 30 (երեսուն) օր հետո, բացառությամբ այն դեպքերի, երբ Բաժանորդը գրավոր կարգով հրաժարվել է սույն կետում նշված ծանուցումը ստանալուց: Որոշակի ժամկետով բաժանորդագրման պարտավորությամբ կնքված և ինքնաբերաբար երկարաձգում նախատեսող Պայմանագրերի սկզբնական գործողության ժամկետի, ինչպես նաև երկարաձգման արդյունքում սահմանված գործողության յուրաքանչյուր ժամկետի ավարտի վերաբերյալ ծանուցումն իրականացվում է Պայմանագրերի գործողության ժամկետի ավարտից առնվազն 5 օր առաջ, և իր մեջ ներառում է ինքնաբերաբար երկարաձգման պայմանների մասին տեղեկատվությունը, բացառությամբ այն դեպքերի, երբ բաժանորդը գրավոր կարգով հրաժարվել է սույն կետում նշված ծանուցումը ստանալուց:

~~18.8~~ Բաժանորդն իրավունք ունի սույն Պայմանների 13.5.2 կետում նշված կարգով միակողմանի կարգով լուծելու Բաժանորդային Պայմանագիրը:

18.9 Սույն Պայմանների 18.7 և 18.8 կետերում նշված՝ բաժանորդի իրավական վիճակի վատթարացման հիմքով Պայմանագրի միակողմանի լուծման արդյունքում Բաժանորդից որևէ հավելյալ վճար (տույժ, տուգանք կամ հրաժարագին) չի գանձվում:

18.10 Հաշվի առնելով այն հանգամանքը, որ համաձայն սույն Պայմանների 18.5 կետի Օպերատորն իրավունք ունի սույն Պայմաններում, Բաժանորդային Պայմանագրում, Ծառայությունների Սակագներում պարբերաբար կատարել փոփոխություններ, ուստի Բաժանորդը անվերապահորեն ընդունում է, որ Ինտերնետային կայքում հրապարակված ծառայությունների մատուցման Պայմանների, սակագների, Առաջարկի Նկարագրերի, ինչպես նաև Կարգերի/Կանոնների և այլ տարբերակների միջև հակասության դեպքում գործում են Ինտերնետային կայքում վերջին ամսաթվով հրապարակված Պայմանները, սակագները, Առաջարկի Նկարագրերը, Կարգերն ուԿանոնները:

18.11 Բաժանորդը պարտավոր է Ոանձամբ հետևել (ստուգել) Օպերատորի կողմից սույն Պայմանների, Բաժանորդային Պայմանագրի կատարվող փոփոխություններին, որոնք հրապարակվում են Օպերատորի Ինտերնետային կայքում և/կամ ներկայացվում Վաճառքի և սպասարկման կենտրոններում:

18.12 Օպերատորն իրավունք ունի ամբողջությամբ կամ մասամբ փոխանցել Բաժանորդային Պայմանագրով ամրագրված իր իրավունքները կամ զիջել իր պարտավորություններն այլ անձի՝ առանց Բաժանորդի համաձայնության:

18.13 Բաժանորդային Պայմանագրով չկարգավորված Օպերատորի և Բաժանորդի մյուս փոխհարաբերությունները կարգավորվում են ՀՀ գործող օրենսդրության համաձայն:

18.14 Բաժանորդային Պայմանագրի որևէ դրույթ անվավեր կամ առոչինչ ճանաչվելու դեպքում մնացած դրույթները չեն փոփոխվում և մնում են ուժի մեջ:

18.15 Սույն Պայմանները, Բաժանորդային Պայմանագիրը կազմված է հայերեն լեզվով, սակայն կարող է թարգմանվել և զուգահեռ հրապարակվել նաև այլ լեզուներով: Հայերենի և այլ լեզվով հրապարակումների միջև հակասության դեպքում գերակա է հայերեն տարբերակը:

ԲԱԺԻՆ 19

Անցումային դրույթներ

19.1 Սույն Պայմանները կիրառվում են մինչ սույն Պայմանների ուժի մեջ մտնելը Կողմերի միջև կնքված նախկին բոլոր Պայմանագրերի (բաժանորդագրությունների) և դրանց հիման վրա մատուցվող Ծառայությունների նկատմամբ:

Օպերատորի վավերապայմանները

«Տելեկոմ Արմենիա» բաց բաժնետիրական ընկերություն

Հասցեն՝ ՀՀ, Երևան, Ազատության պողոտա 24/1

Ինտերնետային կայք՝ www.telecomarmenia.am